



«Հաշվարկային կենտրոն»

Փակ բաժնետիրական ընկերություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ  
ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ  
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԻ  
ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ



# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՄՆ ՄՁԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԲԷՑ	Բարձրավիճակ էլեկտրական ցանցեր
ԲՑՕ	Բաշխման Ցանցի Օպերատոր
ԳՎտԺ	Գեզավատու ժամ
ԿԷԱ	Կարգավորվող (սակագնային առումով) էլեկտրաէներգիա արտադրող
ԿՎտ	Կիլովատտ
ԿՎ	Կիլովոլտ
ԿՎտԺ	Կիլովատտ ժամ
ՀԱԷԿ	Հայկական Ատոմային էլեկտրակայան
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՑՕ	Հաղորդման ցանցի օպերատոր
ՀՕ	Համակարգի օպերատոր
ՄՎտ	Մեգավատտ
ՄԷԱ	Մրցակցային գներով էլեկտրաէներգիա արտադրող
ՇՕ	Շուկայի օպերատոր
ՉԷԱ	Չկարգավորվող (սակագնային առումով) էլեկտրաէներգիա արտադրող
ՊՄԳ	Պետության-մասնավոր գործընկերության պայմանագիր
ՋԷԿ	Ջերմաէլեկտրակայան
ՎԷԱ	Վերականգնվող էլեկտրաէներգիա արտադրող
CAISO	California Independent System Operator
ENTSO-E	European Network of Transmission System Operator for Electricity
ERCOT	Electric Reliability Council of Texas
NYISO	New York Independent System Operator
PJM	PJM Regional Transmission organization (RTO)
GTMax	Արտադրողական և հաղորդման մաքսիմիզացման ծրագիր



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն Էլեկտրաէներգետիկական շուկայի ամբողջովին կարգավորվող կառուցվածքից նախատեսում է անցնում կատարել շուկայի ազատականացված կառուցվածքի՝ աստիճանաբար ներդրելով մրցակցային շուկայի բաղադրիչներ: Այս անցումը առաջին հերթին պահանջում է հավասարակշռված մոտեցում մրցունակ շուկայի ներդրման հիմնական նախապայմանների ստեղծման նպատակով: Սույն հայեցակարգի նպատակն է սահմանել առաջարկվող շուկայի նոր կառուցվածքի հիմնական բաղադրիչները անցումային ժամանակահատվածի համար, որոնք կապահովեն մրցունակ շուկային աստիճանաբար անցումը՝ ինչպես շուկայի մեծածախ, այնպես էլ մանրածախ հատվածում, հնարավորություն ընձեռելով նաև սպառողներին մատակարարի ընտրության հարցում:

Հայաստանի Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի և Էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների սույն հայեցակարգը պատրաստվել է ԱՄՆ ՄՉԳ կողմից ֆինանսավորվող և RTI կազմակերպության կողմից իրականացվող «Ցածր արտանետումներով ռազմավարություն եվ մաքուր էներգիայի զարգացում Եվրոպայում և Եվրասիայում» (EC-LEDS) ծրագրի խորհրդատուների աջակցությամբ: Հայաստանում EC-LEDS ծրագրի նպատակն է աջակցել էներգետիկայի ազգային ռազմավարության իրագործմանը, Էլեկտրաէներգետիկական շուկայի բարեփոխումներին, ինչպես նաև խթանել Վրաստանի հետ միջպետական առևտուրը: Այն ներառում է նաև անհրաժեշտ աշխատանքներն ուղղված Հայաստանի էներգետիկայի ոլորտի օրենսդրության և Էլեկտրաէներգետիկական համակարգի ստանդարտների ներդաշնակեցմանը Վրաստանի հետ՝ համահունչ Եվրամիության օրենսդրական կարգավորումների պահանջներին:

Այս համատեքստում հարկ է նշել, որ EC-LEDS ծրագրի աջակցությամբ մշակված Հայաստանի Էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման և միջպետական առևտրի խթանման գործողությունների ծրագիրը 2017 թվականի հուլիսի 27-ին ՀՀ Կառավարության կողմից արդեն իսկ արժանացել է հավանության: Այն հենվում է «Տարբերությունների վերլուծություն (GAP)», «Շուկայի մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները» հաշվետվության, «Հայաստանի Էլեկտրաէներգետիկական շուկայի հնարավոր նոր մոդելները» հաշվետվության, «Հայաստանի Էլեկտրաէներգիա արտադրողների համար առաջարկվող սակագների կառուցվածք» հաշվետվության և 2017թ. սեպտեմբերին ՀՀ Ազգային ժողով ներկայացված «Էներգետիկայի մասին» օրենքի նախագծի վրա, որն արդեն իսկ 2018 թվականի հունվարին ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Այսպիսով, սույն հայեցակարգը ամփոփում է Հայաստանի Էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքի և Էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմների՝ անցումային ժամանակահատվածի համար առաջարկվող մոտեցումները, ինչը պետք է հիմք հանդիսանա հետագա կարգավորող ենթաօրենսդրական ակտերի մշակման ու համապատասխան գործիքների ներդրման համար:

Հայեցակարգի Գլուխ 2-ում սահմանվում են շուկայի մասնակիցները, որոնք կարևոր դերակատարում կունենան նոր շուկայի համակարգում: Նախ, շուկայի առաջարկվող կառուցվածքը միտված է ապահովելու նոր մասնակիցների մուտքը շուկա, ինչպիսիք են Երաշխավորված և Անկախ Էլեկտրաէներգիայի մատակարարները, Թրեյդերները և Որակավորված սպառողները, իսկ ավելի երկարաժամկետ հեռանկարում նաև լիարժեք մրցակցային պայմաններում գործող Էլեկտրաէներգիա արտադրողները: Այս մասնակիցները ավելի ընդարձակ դերակատարում կստանան շուկայում Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի իրականացման համար՝ այդպիսով բարելավելով

շուկայի լիկվիդայնությունը և ավելի մեծ ընտրության հնարավորություններ ընձեռելով ու ծառայություններ առաջարկելով ինչպես գնորդներին այնպես էլ վաճառողներին: Բացի այդ, Շուկայի օպերատորը կմշակի և կներդնի շուկայի նոր առևտրային կանոններ՝ մրցունակ շուկայի գործառույթների բարելավման համար, իսկ Համակարգի օպերատորը կստանձնի համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման ու երկարաժամկետ պլանավորման ամոռջական դերակատարում: Կհստակեցվեն Համակարգի օպերատորի և Բաշխման ցանցի օպերատորի հարաբերությունները, ինչպես նաև Երաշխավորված մատակարարի, Թրեյդներների ու Որակավորած սպառողների դերը, որոնց կթույլատրվի մեծածախ շուկայից Էլեկտրաէներգիա գնել:

Գլուխ 3-ում քննարկվում են անցումային շուկայի հիմնական սեգմենտները, որոնք ներառում են Հզորության շուկան, Էլեկտրաէներգիայի շուկան, Հաշվեկշռման շուկան և Համակարգային օժանդակ ծառայությունները: Հարկ է նշել, որ որոշ արտադրողներ հնարավորություն կունենան օգտագործելու իրենց շուկայական դիրքը՝ հաշվի առնելով առաջարկի և պահանջարկի ներկայիս կառուցվածքը: Եթե վերջիններս նման վարքագիծ դրսևորեն ապա կստանան զգալի եկամուտներ, քան կարող էին ստանալ մրցունակ շուկայում, ինչի արդյունքում սպառողներից արտադրողներին հավելյալ արժեքի փոխանցում տեղի կունենա: Մինչև սակագնային կարգավորումից լիրաժեք հրաժարվելը պետք է ապահովվի համապատասխան միջավայր մրցունակ շուկայի ստեղծման համար: Անհրաժեշտ է շուկայի մշտադիտարկման ծրագիր և շուկան մշտադիտարկող մարմին ու կանոններ՝ տարբեր շուկայի մասնակիցների գործողությունների վերահսկման և նրանց կողմից շուկայի կանոնների կատարումն ապահովելու համար:

Սույն հայեցակարգի ներքո առաջարկվող Հզորության շուկայի ներմուծումը թույլ կտա Համակարգի օպերատորին սահմանել համակարգի հուսալիության ապահովման համար պահանջվող հզորության չափաքանակը և գնորդների վրա դնել այդ հզորության գնման պատասխանատվությունը՝ ռացիոնալ և թափանցիկ մեթոդաբանության հիման վրա: Անցումային փուլում մրցակցային հիմունքներով գործող Հզորության շուկայի ներդրումը իրատեսական չէ, ուստի այդ ընթացքում գները չեն սահմանվի գնորդների և վաճառողների հայտերի հիման վրա: Փոխարենը՝ հզորության գները կշարունակի կարգավորել Հանձնաժողովը: Նախատեսվում է նաև, որ սկզբնական փուլում Համակարգային օժանդակ ծառայությունների մեծ մասը կգնվի մի քանի արտադրողներից, հաշվի առնելով վերջիններիս կողմից նման ծառայություններ տրամադրելու կարողությունը և արժեքը: Այս դեպքում ևս չի լինի հայտերի հիման վրա Համակարգային օժանդակ ծառայությունների գները որոշող շուկայական մեխանիզմ. դրանց գները ևս կկարգավորի Հանձնաժողովը: Նույն ժամանակ, նշված գլխում քննարկվում է Ուղիղ պայմանագրերի և Օր-առաջ շուկաների գործառույթները: Նախատեսվում է, որ գնորդների և վաճառողների միջև առջ ու վաճառքի գործարքների մեծ մասը տեղի կունենա Ուղիղ պայմանագրերի շուկայում՝ առնվազն ամսական կտրվածքով: Ակնկալվում է, որ որոշ քանակությամբ Էլեկտրաէներգիայի առջ ու վաճառք տեղի կունենա նաև Օր-առաջ շուկայում, որտեղ գնորդների և վաճառողների հայտերի հիման վրա կձևավորվեն Էլեկտրաէներգիայի ժամային գները՝ «համընդհանուր քլիրինգային գնի» սկզբունքի կիրառմամբ: Վերջինս, կարելի է ասել, հանդես կգա նաև որպես առաջնային Հաշվեկշռման շուկա գնորդների ու վաճառողների միջև կնքված ուղիղ պայմանագրերի համար՝ Օր-առաջ շուկայում դրանց անհաշվեկշռույթների արտացոլման նպատակով: Այնուհետև կլինի հաշվեկշռման մեկ այլ մեխանիզմ՝ Օր-առաջ շուկայի և իրական ժամանակով գործարքների միջև տարբերությունների հաշվառման համար: Հայաստանի Էլեկտրաէներգետիկ շուկայի նոր կառուցվածքը անցումային ժամանակահատվածի համար գծապատկերային եղանակով ներկայացված է Հավելված 1-ում:

Գլուխ 4-ում նկարագրված է սակագների սահմանման կարգավորվող մոդելը: Մեծածախ մատակարարման սակագները կներառեն հզորության, էլեկտրաէներգիայի, հաղորդման և համակարգային օժանդակ ծառայությունների և հաշվեկշռման բաղադրիչները: Սակագներում կներառվեն նաև Համակարգի օպերատորի և Շուկայի օպերատորի գործառույթների իրականացմանն առնչվող ծախսերը: Մանրածախ հատվածի սակագները, ի լրումն նշվածի կներառեն նաև բաշխման բաղադրիչը և Երաշխավորված մատակարարի գործառույթներին առնչվող ծախսերը: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է ներդնել ներկայիս սակագնային կարգավորման “ծառայության արժեքի” մոդելից մրցունակ գնագոյացմանն անցում կատարելու աստիճանական մեխանիզմ: Կտրուկ անցումը լիովին մրցունակ մեծածախ շուկայի կհանգեցնի սպառողի համար էլեկտրաէներգիայի մատակարարման գների թռիչքի: Եթե Օր-առաջ էլեկտրաէներգիայի շուկան օգտագործվի բոլոր գործարքների համար, որոշ ինֆրամարժեքի արտադրողներ (այն արտադրողները, որոնց փոփոխական ծախսերը ցածր են շուկայական քլիրինգային գնից) կստանան իրենց փոփոխական ծախսերը զգալի գերազանցող եկամուտներ: Արդյունքում սպառողները կվճարեն զգալի շատ, քան վճարում են այժմ արտադրված էլեկտրաէներգիայի համար և տեղի կունենա լրացուցիչ արժեքի փոխանցում սպառողներից արտադրողներին, ինչը կհանգեցնի բացասական արձագանքի: Սակագների սահմանման անցումային մեխանիզմը պետք է մշակվի զգուշորեն՝ ինչպես գևորդի, այնպես էլ վաճառողի շահերը լիարժեք հաշվի առնելու համար:

Գլուխ 5-ում ներկայացվում է մանրածախ և մեծածախ շուկայի կանոնների և պայմանագրերի կարգավորմանն առնչվող խնդիրները: Մեծածախ շուկայի կանոնները պետք է համապատասխանեն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության պահանջներին և հաշվի առնեն Հաղորդման համակարգերի օպերատորների եվրոպական ցանցի (ENTSO-E) կանոնների պահանջները: Մեծածախ շուկայի կանոնները կընդգրկեն այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մեծածախ էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների գրանցման պայմանները, շուկայում առևտրի կանոնները, էլեկտրաէներգիայի ներկրման և արտահանման կարգավորումները, ուղիղ պայմանագրերի կնքման ընթացակարգերը, Օր-առաջ և Հաշվեկշռման շուկաների գործունեության կարգավորումները, տվյալների պահպանման և թափանցիկությանն առնչվող պահանջները: Նմանապես, մանրածախ շուկայի առևտրային կանոններն կընդգրկեն այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են առևտրի կանոնները, էլեկտրաէներգիայի մատակարարման և Երաշխավորված մատակարարի ծառայությաններին ներկայացվող պահանջները, էլեկտրաէներգիայի բաշխման գործունեությանը ներկայացվող պահանջները, սպառողների՝ մատակարարի փոփոխման սկզբունքները, ինչպես նաև տվյալների պահպանման և թափանցիկության պահանջները: Տվյալ գլխում նաև քննարկվում է հաղորդման և բաշխման ցանցային կանոնները, որոնք պետք է հենվեն ENTSO-E պահանջների հիման վրա, ինչպես նաև մանրածախ և մեծածախ առևտրի պայմանագրերի կառուցվածքը, լիցենզավորման կանոնները շուկայի տարբեր մասնակիցների համար, ներառյալ՝ Երաշխավորված մատակարարի, Անկախ մատակարարների և Թրեյդերների համար:

Հարկ է նշել, որ մինչև Օր-առաջ շուկայի գործարկումը խորհուրդ է տրվում փորձնականորեն մոդելավորել դրա ներդրման ազդեցությունը էլեկտրաէներգիայի արտադրության և սպառողական գների, ինչպես նաև արտանետումների ծավալների վրա: Օգտագործելով GE Multi Area Production Simulation Software (MAPS) ծրագիրը, կամ այլ նմանատիպ ծրագրային ապահովում անհրաժեշտ կլինի իրականացնել էլեկտրաէներգիայի արտադրության մոդելավորում՝ կանխատեսելու համար, թե որ արտադրող կայանները կգտնվեն մարժեքի և սահմաններում և տարվա ընթացքում ինչպիսին կլինեն յուրաքանչյուր ժամվա՝ Օր-առաջ շուկայի քլիրինգային գները: Այդ տվյալների հիման վրա հնարավոր կլինի գնահատել արտադրողների եկամուտների

փոփոխությունը, ինչպես նաև սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի գների վրա դրանց ազդեցությունը: Համակարգում պահանջվող հզորությունների սակագները և անհրաժեշտ հասույթը պետք է դիտարկվեն առանձին հաշվարկով՝ էլեկտրաէներգիայի առքի ու վաճառքի ընթացքում առաջացող լրացուցիչ եկամուտները վաճառողների և գնորդների միջև հավասարակշռելու նպատակով: Նման մոդելավորումը նաև թույլ կտա կանխատեսել ակնկալվող արտանետումների քանակը, ներառյալ CO<sub>2</sub>-ի արտանետումները:



# ԲԱԺԻՆ 1. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրությամբ նախատեսվում է շուկայի ներկայիս կառուցվածքից անցում կատարել ավելի ազատական կառուցվածքի, որի ներքո Թրեյդերներին, Անկախ մատակարարներին և Որակավորված սպառողներին Էլեկտրաէներգետիկական շուկա մուտքի իրավունք կտրամադրվի: Օրենքը պահանջում է տարանջատել բաշխման և մատակարարման գործառույթները՝ առաջին յոթ տարիների ընթացքում Երաշխավորված մատակարարի գործառույթը ամբողջությամբ կարգավորվող ռեժիմի ներքո պատվիրակելով Բաշխման ցանցի օպերատորին: Հարկ է նշել որ, ընդհանուր առմամբ, այն կառույցները, որոնք պարտականություններ և դերակատարում ունեն Էլեկտրաէներգետիկական շուկայում, բնութագրվում են որպես շուկայի մասնակիցներ և մատուցում են ստորև ներկայացված ծառայությունները.

- **Շուկայի մասնակիցներ.** Էլեկտրաէներգետիկական ոլորտում գործունեություն ծավալող կառույցներն են, որոնց գործունեությունը կարգավորվում է առաջնային և երկրորդային օրենսդրությամբ, լիցենզիայի պայմաններով և համապատասխան պետություն-մասնավոր գործընկերության պայմանագրերով (այսուհետև՝ ՊՍԳ): Այդպիսիք են Էլեկտրաէներգիա արտադրողները՝ անկախ սեփականության ձևից, Թրեյդերները, Երաշխավորված և Անկախ մատակարարները, սակագնային կարգավորման ենթակա և ոչ ենթակա սպառողները, այդ թվում Որակավորված սպառողները:
- **Շուկային ծառայություններ մատուցողներ.** Բոլոր այն կառույցները, որոնք պատասխանատու են Էլեկտրաէներգետիկական ոլորտի շուկայի մասնակիցների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ծառայությունների մատուցման համար՝ ոլորտի զարգացման պլանավորման և կառավարման, կարգավարման և հաշվեկշռման, համակարգային օժանդակ ծառայությունների մատուցման, Էլեկտրաէներգետիկական շուկայի զարգացման, Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման, ինչպես նաև շուկայի մեծածախ և մանրածախ հատվածներում Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի ծավալների հաշվառման և հաշվարկների կազմակերպման նպատակով: Այդպիսիք են Համակարգի և Շուկայի օպերատորները, ինչպես նաև Հաղորդման և Բաշխման ցանցերի օպերատորները:

## 1.1 Մեծածախ շուկայի մասնակիցները և ծառայություններ մատուցողները

Ստորև ներկայացվում են այն կառույցները, որոնք կգործեն Հայաստանի մեծածախ շուկայում՝ հաշվի առնելով նաև գալիք հինգ տարիների ընթացքում ակնկալվող զարգացումները:

### 1.1.1 ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

#### 1. Էլեկտրաէներգիա արտադրողներ

Գալիք հինգ տարիների ընթացքում Էլեկտրաէներգիա արտադրողների խումբը բաղկացած կլինի հետևյալ կայաններից.

- 1) Կարգավորվող (սակագնային առումով) ԷլեկտրաԷներգիա արտադրողներ (այսուհետև՝ ԿԷԱ)
  - ՀԱԷԿ,
  - Երևանի ՀԾԳՑԷ-1,
  - Հրազդանի ՋԷԿ (նախատեսվում է շահագործումից հանել 2020թ.),
  - Սևան-Հրազդան հիդրոկասկադ:
- 2) Չկարգավորվող (սակագնային առումով) ԷլեկտրաԷներգիա արտադրողներ (այսուհետև՝ ՉԷԱ)
  - Որոտանի հիդրոկասկադ,
  - Երևանի ՀԾԳՑԷ-2 (նախատեսվում է շահագործման հանձնել 2020թ.),
  - Մասրիկ-1 արևային Էլեկտրակայան (նախատեսվում է շահագործման հանձնել 2020թ.),
  - Շնող ՀԷԿ (նախատեսվում է շահագործման հանձնել 2023թ.):
- 3) Վերականգնվող ռեսուրսների օգտագործմամբ մինչև 30 ՄՎտ հզորությամբ ԷլեկտրաԷներգիա արտադրողներ (այսուհետև՝ ՎԷԱ),
  - Փոքր ՎԷ կայաններ (մինչև 30 ՄՎտ), որոնք ունեն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ԷլեկտրաԷներգիայի գնման երաշխիք (ներկայիս տվյալներով սպասվում է, որ 2020թ.կլինեն նման 191 կայաններ՝ 360 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և 1035 ԳՎտժ միջին տարեկան արտադրությամբ),
- 4) Շուկայում լիարժեք մրցակցային գներով ԷլեկտրաԷներգիա արտադրողներ (այսուհետև՝ ՄԷԱ).
  - Հրազդանի 5-րդ բլոկ, որի սակագինը չնայած այս պահին կարգավորվում է, սակայն նման կարգավորումը հենվում է Հրազդանի ՋԷԿ-ի սակագնի մեծության վրա: Ավելի պարզ ասած, Հրազդանի 5-րդ բլոկի սակագինը սահմանվում է ոչ թե վերջինիս անհրաժեշտ հասույթը, ներառյալ իրականացված ներդրումների վերադարձն ապահովելու նպատակով, այլ Հրազդանի ՋԷԿ-ի սակագինն ընդունվում է սահմանային մեծություն և ընկերությունն ինքն է առաջարկում, թե ինչ ավելի ցածր գնով է կարող ԷլեկտրաԷներգիա մատակարարել և հզորությունն պատրաստ պահել համակարգում: Ուստի այս կայանը դե ֆակտո գործում է շուկայական գնագոյացման մեխանիզմով, դե յուրե լինելով սակագնային կարգավորման ներքո: Հրազդանի 5-րդ բլոկի սակագնային կարգավորման դաշտից լիարժեք հանելը Էապես կնպաստի շուկայի զարգացմանը:
  - Փոքր ՎԷ կայաններ (մինչև 30 ՄՎտ), որոնց «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ԷլեկտրաԷներգիայի գնման երաշխիքի ժամկետը սպառվել է (ներկայիս տվյալներով սպասվում է, որ 2020թ. կլինեն նման 27 կայաններ՝ 56 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և 156 ԳՎտժ միջին տարեկան արտադրությամբ):
  - Չկարգավորվող գներով այլ արտադրողներ, որոնք այս պահին ըստ Էուրոյան երկու փոքր կոգեներացիոն կայաններն են, որոնք նաև ջերմային Էներգիա են արտադրում:

Ըստ Էուրոյան վերը նշվածներ ՄԷԱ կայանները կլինեն առաջինները, որոնք շուկայում կգործեն լիարժեք մրցակցության պայմաններում: Հարկ է նաև նշել, որ շուկայի նոր կառուցվածքը և առևտրի մեխանիզմը նպատակ

ունի ապահովել շուկա լիարժեք մրցակցային պայմաններով նոր ՄԷԱ կայանների մուտքը՝ մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով: Վերը նշվածը չի նշանակում, որ միայն ՄԷԱ կայանները կկարողանան մրցակցային պայմաններով էլեկտրաէներգիա վաճառել: ԿԷԱ կայանները ևս, մեծածախ շուկայի կարգավորվող հատվածում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց հետո ազատություն կունենան չկարգավորվող գներով էլեկտրաէներգիա վաճառելու հարցում: Չի բացառվում նաև, որ ՀԱԷԿ-ը և Երևանի ՀՇԳՏԷ-1 կայանը որոշակի իրավիճակներում ունենան շուկայի կարգավորվող հատվածում չպահանջված էլեկտրաէներգիայի ավելցուկ և կարողանան այդ էլեկտրաէներգիան վաճառել չկարգավորվող գներով: Այս ամենը կախված կլինի պահանջարկի աճից և կառուցվածքից, ինչպես նաև շուկայի կանոններով տրված ԿԷԱ կայաններին տրված ազատություններից:

## **2. Երաշխավորված մատակարար**

Առաջին յոթ տարիների համար ներկայիս Բաշխման ցանցի օպերատորը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այսուհետև՝ ՀԷՑ), կշարունակի գործունեությունը ամբողջովին մնալով կարգավորման դաշտում նաև որպես Երաշխավորված մատակարար:

Երաշխավորված մատակարարին կթույլատրվի էլեկտրաէներգիա գնել մեծածախ շուկայում, ներկրել այն, ինչպես նաև ավելցուկը վաճառել շուկայի այլ մասնակիցների՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով:

Երաշխավորված մատակարարը կշարունակի ապահովել մեծածախ շուկայում գնված էլեկտրաէներգիայի (հզորության) համար վճարումները՝ ներկայիս Մեծածախ շուկայի անցումային առևտրային կանոններով սահմանված հատուկ հաշվի մեխանիզմով<sup>1</sup>:

## **3. Անկախ մատակարարներ**

Ներկայումս Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայում Անկախ մատակարարներ չեն գործում: Ակնկալվում է, որ դրանք մուտք կգործեն աստիճանաբար՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ ուժի մեջ մտնելուց և շուկայի ազատական կառուցվածքին անցնելուց հետո:

Անկախ մատակարարներին կթույլատրվի էլեկտրաէներգիա գնել մեծածախ շուկայում, ներկրել այն, ինչպես նաև ավելցուկը վաճառել շուկայի այլ մասնակիցների՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով: Վերջիններս պարտավոր կլինեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան ապահովել իրենց հետ մատակարարման պայմանագրեր կնքած սպառողների էլեկտրամատակարարումը:

## **4. Թրեյդերներ**

Այժմ առկա է միայն նման մեկ պետական ընկերություն, որն ունի էլեկտրաէներգիայի ինչպես ներկրման, այնպես էլ արտահանման լիցենզիա և փաստացի գործում է որպես թրեյդեր («Էներգախմբա» ՍՊԸ): Ակնկալվում է, որ շուկայի զարգացմանը զուգահեռ ի հայտ կգան նաև նոր մասնավոր թրեյդերներ:

<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115608>

Թրեյդերներին իրավունք կտրվի չկարգավորվող գներով էլեկտրաէներգիա գնել արտադրողներից և մեծածախ շուկայի այլ մասնակիցներից, այն արտահանել, ինչպես նաև ներկրել ու վաճառել մեծածախ շուկայում՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով: Այս համատեքստում հարկ է նշել, որ էլեկտրաէներգիան արտահանելու իրավունք կտրվի միայն էլեկտրաէներգիայի սպառման ներքին պահանջարկի բավարարման դեպքում, ինչի որոշման չափորոշիչները պետք է նկարագրվեն շուկայի կանոններում: Թրեյդերները չեն մասնակցի շուկայի կարգավորվող հատվածին:

## **5. Որակավորված սպառողներ**

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության համաձայն Որակավորված սպառողներին կթուլատրվի էլեկտրաէներգիա գնել մեծածախ շուկայում, ներկրել այն կամ ավելցուկը վաճառել շուկայի մյուս մասնակիցներին՝ շուկայի կանոններով սահմանված ընթացակարգերով: Ցանկացած սպառող կկարողանա ստանալ Որակավորված սպառողի կարգավիճակ՝ սեփական դիմումի հիման վրա, Հանաժողովի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում: Ներկայումս Մեծածախ շուկայի անցումային առևտրային կանոնների համաձայն միայն 6(10) կվ և բարձր լարմամբ բաշխման ցանցին միացած սպառողները կարող են ստանալ Որակավորված սպառողի կարգավիճակ, եթե վերջինիս առևտրային հաշվառման համակարգը բավարարում է էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններով<sup>2</sup> սահմանված չափանիշներին և գրանցված է Շուկայի օպերատորի կողմից: Չնայած, որ այս շրջանակն արդեն իսկ բավական ընդարձակ է, այն աստիճանաբար էլ ավելի կընդարձակվի ներառելով բոլոր արևտրային սպառողներին, լարման բոլոր մակարդակներում:

### **1.1.2 ՄԵԾԱԾԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ**

#### **1. Համակարգի օպերատոր**

Համակարգի օպերատորին բացառիկ իրավունք կտրվի և կպարտավորեցվի շուկայի մասնակիցներին մատուցել հետևյալ ծառայությունները.

- 1) էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում,
- 2) էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում,
- 3) էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում,
- 4) տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի զուգահեռ աշխատանքի ապահովում:

Վերը նշվածից բացի Համակարգի օպերատորը կունենա լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ ոչ բացառիկ գործառնությունների իրականացման իրավունքներ:

Համակարգի օպերատորը արտադրողներին կարգավարելիս պարտավոր կլինի ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները էլեկտրաէներգիայի արտադրությունը և հաղորդումը նվազագույն ծախսերով ապահովելու համար՝ հաշվի առնելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով տրված

<sup>2</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113654>

Էլեկտրաէներգիայի գնման երաշխիքները կամ ՀՀ կառավարության կողմից ՊՍԳ պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

## **2. Շուկայի օպերատոր**

Շուկայի օպերատորին բացառիկ իրավունք կտրվի և կպարտավորեցվի շուկայի մասնակիցներին մատուցել հետևյալ ծառայությունները.

- 1) Էլեկտրաէներգետիկական շուկայի գործունեության կազմակերպում,
- 2) Էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների հաշվառում,
- 3) մեծածախ շուկայի մասնակիցների միջև պայմանագրերի և Էլեկտրաէներգիայի (հզորության) արտահանման և ներկրման պայմանագրերի գրանցում:
- 4) Էլեկտրաէներգետիկական շուկայում կնքված պայմանագրերի, ինչպես նաև արտահանման և ներկրման պայմանագրերի հաշվառում,
- 5) Էլեկտրաէներգետիկական շուկայում կնքված պայմանագրերի, ինչպես նաև արտահանման և ներկրման պայմանագրերի համաձայն գնված և վաճառված Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառում, փաստաթղթերի կազմում և մեծածախ շուկայի առևտրի մասնակիցներին և ծառայություններ մատուցողներին դրանց ներկայացում:

Շուկայի օպերատորը այլ լիցենզավորված անձանց հետ համատեղ պետք է մշակի Էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրային կանոնները՝ դրանք Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելու նպատակով: Էլեկտրաէներգիայի, հզորության և համակարգային օժանդակ ծառայությունների ցանկացած մրցունակ գնման կազմակերպում պետք է կատարվի Շուկայի օպերատորի միջոցով:

## **3. Հաղորդման ցանցի օպերատոր**

Ներկայումս Էլեկտրաէներգիայի հաղորդման լիցենզիա ունի միայն պետական ընկերություն՝ «Բարձրավոլտ Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (ԲԷՑ), որը գործում է որպես Հաղորդման ցանցի օպերատոր՝ Համակարգի օպերատորի լիակատար վերահսկողության ներքո: Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝ Հաղորդման ցանցի օպերատորին Հայաստանի Հանրապետության տարածքում Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման, հաղորդման ցանց կառուցելու (վերակառուցելու, ընդլայնելու) ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկրներ Էլեկտրական Էներգիա (հզորություն) տարանցելու իրավունք է տրվում: Հաղորդման ցանցի օպերատորը պարտավոր է կատարել իր գործառույթները շուկայի կանոններին և կնքված պայմանագրերի համաձայն: Հաղորդման ցանցի օպերատորի, Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի և մեծածախ շուկայի մասնակիցների հարաբերությունները կկարգավորվեն մեծածախ շուկայի կանոններով և պայմանագրերով:

## **4. Բաշխման ցանցի օպերատոր**

Ներկայումս Էլեկտրաէներգիայի բաշխման լիցենզիա ունի միայն «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (ՀԷՑ), որը ծառայություններ է մատուցում մեծածախ շուկայի այն մասնակիցներին, որոնք միացված են բաշխման ցանցին: Բաշխման ցանցի օպերատորը կշարունակի իր

ծառայությունների մատուցումը շուկայի կանոնների և կնքված պայմանագրերի համաձայն:

## **1.2 Մանրածախ շուկայի մասնակիցները և ծառայություն մատուցողները**

Սույն բաժնում նկարագրվում են այն կառույցները, որոնք կգործեն Հայաստանի մանրածախ շուկայում՝ հաշվի առնելով առաջիկայում սպասվող զարգացումները:

### **1.2.1 ՄԱՆՐԱԾՃԱԽ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ**

#### **1. Երաշխավորված մատակարար**

Ինչպես նշված է նախորդ՝ Մեծածախ շուկայի բաժնում, Բաշխման ցանցի օպերատորին (ՋԷՑ) կտրվի Երաշխավորված մատակարարի առանձին լիցենզիա: Երաշխավորված մատակարարը ամբողջովին կլինի Հանձնաժողովի կարգավորման դաշտում և Էլեկտրաէներգիա կմատակարարի բոլոր սպառողներին, որոնք չեն օգտվում Անկախ մատակարարների ծառայություններից, կամ որոնց մատակարարը Էլեկտրաէներգիա չի մատակարարում՝ տվյալ սպառողից անկախ պատճառներով: Այդ սպառողների կազմում կլինեն նաև Խոցելի սպառողները, որոնք այլ մատակարար ընտրելու հնարավորություն չեն ունենա: Երաշխավորված մատակարարը և վերջինիս սպառողները մատակարարման պայմանագրեր կկնքեն Հանձնաժողովի կողմից սահմանված պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան:

#### **2. Անկախ մատակարարներ**

Ինչպես նշված է նախորդ՝ Մեծածախ շուկայի բաժնում, ներկայումս Հայաստանի Էլեկտրաէներգետիկական համակարգում անկախ մատակարարներ չեն գործում: Ակնկալվում է, որ վերջիններս մուտք կգործեն մանրածախ շուկա աստիճանաբար՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը Նոր խմբագրությամբ ուժի մեջ մտնելուց և շուկայի ազատական կառուցվածքին անցնելուց հետո՝ հնարավոր դարձնելով մանրածախ մրցակցությունը:

### **1.2.2 ՄԱՆՐԱԾՃԱԽ ՇՈՒԿԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ**

#### **1. Բաշխման ցանցի օպերատոր**

Բաշխման ցանցի օպերատորը (ՋԷՑ) կշարունակի իր գործունեությունը որպես միակ բաշխման ծառայություն մատուցող անձ՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ իր ծառայությունները մատուցելով մանրածախ շուկայի մասնակիցներին և ամբողջությամբ կմնա Հանձնաժողովի կարգավորման դաշտում՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի, Բաշխման լիցենզիայի պայմանների<sup>3</sup>, ինչպես նաև շուկայի կանոնների ու կնքված պայմանագրերի շրջանակում:

<sup>3</sup> <http://www.psrc.am/decisions/item/2002-79a>

# ԲԱԺԻՆ 2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԵՎՏՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Էլեկտրաէներգետիկական շուկայում առևտրի մեխանիզմները շուկայի նոր կառուցվածքի համար պետք է ներկայացնեն շուկայի տարբեր սեգմենտների և դրանցից յուրաքանչյուրում առևտրի իրականացման այն գործիքակազմը, որը հնարավորություն կընձեռնի աստիճանաբար անցելու լիարժեք մրցակցային շուկայի՝ առանց անցումային ժամանակահատվածում գնային ցնցումներ առաջացնելու: Նման աստիճանական անցումը անհրաժեշտ է, քանի որ առաջարկի և պահանջարկի ներկայիս բնութագրերով, այս փուլում, Հայաստանում հնարավոր չէ մեծածախ շուկայում արդյունավետ մրցակցությունը: Ստորև ներկայացված են էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքի համար առաջարկվող շուկայի սեգմենտները և յուրաքանչյուրում առևտրի մեխանիզմները:

## 2.1 Հզորության շուկա

Հզորության շուկան նախատեսված է ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ կտրվածքում սպառողների պահանջարկին համապատասխանող արտադրական հզորությունների առկայությունն ապահովելու համար: Էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրական հզորությունները պլանավորում են սպառողների պահանջարկի պիկը ծածկելու համար և հնարավոր է նաև, որ այդ հզորությունները տարվա որոշակի ժամանակահատվածում չօգտագործվեն Էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով: Անկախ այդ հանգամանքից, համակարգում անհրաժեշտ է ունենալ բավարար քանակի արտադրական հզորություններ՝ պիկային բեռի բավարարման, ինչպես նաև վթարային իրավիճակներում սպառողների էլեկտրաէներգիայի մատակարարման սահմանափակումներից խուսափելու համար: Հարկ է նաև նկատի ունենալ, որ անհրաժեշտ հզորությունը կարող է ապահովվել ինչպես արտադրողների կողմից՝ դրանք մշտապես պատրաստ պահելու միջոցով, այնպես էլ սպառողների կողմից՝ պահանջարկի կառավարման արդյունքում՝ նվազեցնելով պիկին կամ վթարային իրավիճակներում վերջիններիս անհրաժեշտ հզորությունը:

Հայաստանում սպառողների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ արտադրական հզորությունների կազմի և քանակի որոշման ներկայիս մեխանիզմն Էական կատարելագործման կարիք ունի: Սպառողների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ արտադրական հզորությունների որոշման համար բազմաթիվ համակարգերում կիրառվում է «հզորության պահուստի մարժայի» գաղափարը: Համակարգի հուսալիության պլանավորման համար սովորաբար գնահատվում է երկու ասպեկտ՝ (1) ռեսուրսների համապատասխանություն և (2) էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգություն: Ռեսուրսների համապատասխանությունը պլանավորման և հավանականության վրա հիմնված հասկացություն է: Համակարգը համարվում է համապատասխանող ռեսուրսներին, եթե արտադրության և հաղորդման առկա ենթակառուցվածքներով սպառողների կանխատեսվող պահանջարկը բավարարելու հավանականությունը առնվազն հավասար է համակարգի համար սահմանված «ստանդարտին»: Որպես կանոն յուրաքանչյուր համակարգի համար այդ «ստանդարտը» հաշվարկվում և հաստատում է Համակարգի օպերատորը: ԱՄՆ-ում այդ ստանդարտը կոչվում է «բեռի կորստի կանխատեսման գործակից» (Loss of load expectation [LOLE]), որը սովորաբար կազմում է 0,1, այսինքն՝ բեռի հարկադրված անջատման հավանականությունը կազմում է տարեկան 0,1 օր կամ ավելի պակաս: Տվյալ

ստանդարտն ըստ էության սահմանում է, թե Համակարգի օպերատորը պիկի ժամանակ առկա բեռից որքան ավել հզորություն պետք է գնի՝ համակարգի հուսալիությունն ապահովելու համար: Այս ստանդարտը հայտնի է նաև որպես «հզորության պահուստի սահմանային մարժայի» պահանջ:

Անվտանգությունը շահագործման առանձնահատկություններից բխող հավանականային բնորոշում ունեցող հասկացություն է, որը հաշվի է առնում հուսալիության առումով զգալի անբարենպաստ հետևանքներ ունեցող հավանական միջադեպերը, երբ համակարգը պլանավորված է և շահագործվում է այնպես, որ կարողանա շարունակել պահանջարկի ապահովումը նույնիսկ նման միջադեպերի դեպքում: Դրանք անվանվում են N-1 կամ N-1-1 կամ N-2, և այլն, որտեղ N-ը համակարգի բաղադրիչների թիվն է, իսկ N-1 պահանջը՝ համակարգի կարողությունը առանձին խափանումների դեպքում (օրինակ՝ գեներատորի, հաղորդման ցանցում խափանումների) շարունակելու իր բնականոն աշխատանքը՝ առանց ջերմային, լարման կամ կայունության հարաչափերը խախտելու<sup>4</sup>:

Վերը նշված ցուցանիշների՝ Հայաստանի Էներգահամակարգում ներդրման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան հաշվարկներ և մշակել կարգավորումներ, որը կիրականացվի շուկայի նոր կառուցվածքի ներդրմանը զուգահեռ: Արդյունքում, Համակարգի օպերատորը անհրաժեշտ պարբերականությամբ կսահմանի համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշներին համապատասխանող հզորությունների պահանջը, ինչը կնպաստի շուկայում գնորդների կողմից պարտադիր վճարման ենթակա հզորությունների կազմի հստակեցմանը՝ կարժամկետ հեռանկարում, ինչպես նաև նոր արտադրական հզորությունների կառուցման անհրաժեշտության որոշմանը և պլանավորմանը՝ երկարաժամկետ հեռանկարում:

Հզորության շուկայի համատեքստում տեղին է նշել, որ բազմաթիվ էլեկտրաէներգետիկական շուկաներում դեռևս բանավեճեր են ընթանում այն մասին, թե արդյոք անհրաժեշտ են հզորության շուկաները, և թե որոնք են դրանց աշխատանքի լավագույն կանոնները: Որպես օրինակ նշենք, որ ERCOT և CAISO շուկաները չունեն Հզորության բաղադրիչ, իսկ NYISO և PJM շուկաների դեպքում, որտեղ դրանք առկա են, մշտապես քննարկում է վերջիններիս արդյունավետության հարցը: Ամեն դեպքում, Հզորության շուկա ունենալու անհրաժեշտությունը առաջին հերթին կախված է այն հանգամանքից, թե որևէ առանձին վերցրած երկիր որքանով է կարևորում իր արտադրական հզորություններով ներքին պահանջարկը ծածկելու կարողությունը: Նույն ժամանակ, միշտ չէ, որ Օր-առաջ էլեկտրաէներգիայի շուկայում արտադրողների ստացած եկամուտները բավարարում են իրենց հաստատուն ծախսերը ծածկելու համար: Սակայն շատ երկրներում առանձին Հզորության շուկա ունենալու անհրաժեշտությունը նվազում է տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական շուկաներին զուգակցմանը համընթաց:

Նշենք նաև, որ մրցունակ Հզորության շուկաներում գնագոյացումն իրականացվում է տարբեր մեխանիզմներով: Որոշ շուկաներում անհրաժեշտ հզորությունների ընտրության աճուրդները տեղի են ունենում տարեկան կտրվածքով, իսկ մյուսներում՝ ամսական: Որոշ շուկաներ ունեն ֆորվարդային բաղադրիչ, որտեղ հզորությունը գնվում է երեք տարի առաջ, իսկ մյուսներում այն իրական ժամանակում գործող շուկա է: Սակայն բոլոր դեպքերում գնագոյացումը տեղի է ունենում գնորդների և վաճառողների առաջարկած հայտերի հիման վրա: Որոշ շուկաներում կիրառվում է «պահանջարկի կորի»

<sup>4</sup> Տե՛ս 2016 NYISO RNA գեկույցը, էջ. 22-25

[http://www.nyiso.com/public/webdocs/media\\_room/press\\_releases/2016/Child\\_2016\\_RNA/2016RNA\\_Final\\_Oct18\\_2016.pdf](http://www.nyiso.com/public/webdocs/media_room/press_releases/2016/Child_2016_RNA/2016RNA_Final_Oct18_2016.pdf)



գաղափարը, որով անհրաժեշտ պահանջարկը գերազանցող հզորության ավելցուկը գնվում է, սակայն աստիճանաբար նվազող գնով: Սա արվում է գնի հավանական տատանումների հավասարակշռման նպատակով, երբ հաջորդ ժամանակահատվածի համար սպասվում է պահանջարկի էական աճ կամ գործող հզորությունների շահագործումից հանում: Նոր, դեռևս չկառուցված կայանները ևս մասնակցում են նման աճուրդներին: Որոշ շուկաներում մեծ դերակատարում ունի նաև պահանջարկի կառավարումը: Այնուամենայնիվ, անցումային փուլի ընթացքում չի ակնկալվում, որ Հայաստանում կստեղծվի գնորդների և վաճառողների հայտերի վրա հիմնված Հզորության մրցակցային շուկա:

Սակագնային կարգավորման առումով հարկ է նաև նշել, որ Հայաստանում բոլոր խոշոր արտադրողները ամբողջությամբ փոխհատուցում են իրենց հաստատուն ծախսերը վճարվող հզորության դրույքի միջոցով: Հաստատուն ծախսերը ներառում են հաստատուն շահագործման և սպասարկման ծախսերը, ինչպես նաև իրականացված ներդրումների նկատմամբ հաշվարկվող մաշվածության և շահույթի 50%-ը: Ներկայումս Համակարգի օպերատորը էլեկտրաէներգիայի տարեկան կանխատեսվող հաշվեկշռում ներառում է առկա բոլոր արտադրական հզորությունները՝ անկախ դրանց տվյալ ժամանակահատվածում հասանելի և անհրաժեշտ լինելու հանգամանքից, ինչպես նաև կանխատեսվող էլեկտրաէներգիայի արտադրանքը և ներկայացնում Հանձնաժողովի հաստատմանը: Հանձնաժողովի կողմից հաստատված այս կանխատեսումը հիմք է հանդիսանում հաջորդ ժամանակահատվածի արտադրող կայանների էլեկտրաէներգիայի և հզորության դրույքների սահմանման համար:

Նկատի ունենալով այն հանգքամանքը, որ Հայաստանը ներկայիս ՊՄԳ պայմանագրերի ներքո արդեն իսկ պարտավորվել է որոշ արտադրողների վճարել հզորության համար, իսկ սակագների ներկայիս կառուցվածքը հզորության վճարներ է նախատեսում նաև մնացած խոշոր արտադրողների դեպքում, ինչպես նաև, որ միայն էլեկտրաէներգիայի շուկայի դեպքում արտադրողների ստացած եկամուտները կարող են բավարար չլինել դրանց հաստատուն ծախսերը ծածկելու համար, շուկայի նոր կառուցվածքում նպատակահարմար է առանձին հզորության և էլեկտրաէներգիայի շուկաների ներդրումը՝ միայն էլեկտրաէներգիայի շուկայի կառուցվածքին անցնելու փոխարեն: Լավ կազմակերպված Հզորության շուկան Հայաստանում համապատասխան գնային ազդակներ կհաղորդի շուկայի նոր մասնակիցներին՝ օգնելով զարգացնել ինչպես նոր արտադրական ռեսուրսներ, այնպես էլ խուսափել գոյություն ունեցող արտադրական ռեսուրսները շահագործումից վաղաժամկետ հանելու խնդրից: Միաժամանակ Հզորության և էլեկտրաէներգիայի Օր-առաջ շուկայում եկամուտներ ստանալու հնարավորությունը ավելի կայուն միջավայր կապահովի շուկա ՄԷԱ կայանների մուտքի համար՝ ֆինանսապես կենսունակ դարձնելով վերջիններիս ծրագրերը առանց ՊՄԳ պայմանագրերով տրվող երաշխիքների և այլ լրացուցիչ խրախուսող մեխանիզմների: Սա չափազանց կարևոր է զարգացող երկրների համար՝ շուկայում մասնավոր ներդրումներ գրավելու առումով:

Ամբողջականացնելով վերը նշվածը, առաջարկվում է նախ ներդնել Համակարգի օպերատորի կողմից սպառողների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ հզորությունների ընտրության մեխանիզմը և այդ արտադրողներին ներառել հզորությունների տարեկան կարգավորվող շուկայում՝ փոխհատուցելով վերջիններիս հաստատուն ծախսերը Հանձնաժողովի կողմից սահմանվող հզորության վճարների միջոցով՝ միաժամանակ մեծածախ շուկայի բոլոր մասնակիցներից, բացի Թրեյդերներից, պարտադիր գանձելով համարժեք հզորության վճարներ: Հզորության շուկայի դեպքում որպես առանձնահատկություն անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՉԷԱ կայանները ուղիղ պայմանագրեր կկնքեն միայն Երաշխավորված մատակարարի հետ,

ինչը կնշանակի որ վերջիններին հզորությունները հասանելի չեն լինի մեծածախ շուկայի մյուս մասնակիցներին:

### **3.1 Էլեկտրաէներգիայի շուկա**

Էլեկտրաէներգիայի շուկան ըստ էության գնորդների և վաճառողների միջև Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի տարբեր մեխանիզմների ամբողջությունն է: Հայաստանի պարագայում այն բաղկացած կլինի տարբեր սեգմենտներից: Առաջինը դա Ուղիղ պայմանագրերի շուկան է, որն իր հերթին անցումային ժամանակահատվածում կունենա կարգավորվող և չկարգավորվող բաղադրիչներ: Այս շուկայում ուղիղ պայմանագրերով ամրագրված Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի քանակների և ակնկալվող սպառման միջև շեղումների դեպքում կողմերը ավելցուկը և պակասորդը կգնեն և կվաճառեն Օր-առաջ շուկայում: Իսկ Օր-առաջ շուկայի և իրական ժամանակում առք և վաճառքի ծավալների միջև բոլոր փաստացի շեղումների՝ անհաշվեկշռույթների առևտուրը, կիրականացվի Հաշվեկշռման շուկայում՝ ընտրված մեխանիզմի ներքո: Ստորև ներկայացվում է Էլեկտրաէներգիայի շուկայի նշված սեգմենտների հայեցակարգային նկարագիրը:

#### **3.1.1. ՈՒՂԻՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՈՒԿԱ**

Անցումային շրջանում Էլեկտրաէներգիայի հիմնական գործարքները կկնքվեն գնորդների և վաճառողների միջև Ուղիղ պայմանագրերի շուկայում՝ կարգավորվող և չկարգավորվող գներով: Սա ևս անցումային մեխանիզմի առանձնահատկությունն է, քանի որ երբ արտադրողը ուղիղ պայմանագիր է կնքում գնորդի հետ ապա իր արտադրած Էլեկտրաէներգիայի գինը կարգավորվում է պայմանագրով:

Ուղիղ պայմանագրերի շուկայում սկզբնական փուլում հիմնական գնորդը կլինի Երաշխավորված մատակարարը (ՅԵՑ), որն այժմ Էլեկտրաէներգիա է մատակարարում բոլոր մանրածախ սպառողներին: Խոշոր սպառողներից որոշները, ստանալով Որակավորված սպառողի կարգավիճակ, կլինեն առաջինները, որ ուղիղ պայմանագրեր կկնքեն մեծածախ շուկայից Էլեկտրաէներգիա գնելու համար, քանի որ Անկախ մատակարարների և մասնավոր Թրեյդերների շուկա մուտքի համար որոշակի ժամանակ կպահանջվի: Վերջիններս միջև շուկա մուտք գործելը կցանկանան գործնականում տեսնել Էլեկտրաէներգիայի առևտուր իրականացնելու իրական հնարավորությունները և գնահատել գործունեություն սկսելու հետ կապված ռիսկերը:

Ակնկալվում է, որ ուղիղ պայմանագրերը կկնքվեն առնվազն մեկ ամիս ժամանակահատվածի համար՝ կարգավորվող հատվածում, սակայն կլինեն նաև տարեկան կամ ավելի երկարաժամկետ պայմանագրեր՝ չկարգավորվող հատվածում: Ուղիղ պայմանագրերը կներառեն դրույթներ առք ու վաճառքի առարկա Էլեկտրաէներգիայի գնի, քանակի, առաքման վայրի և այլ կատարողական ցուցանիշների մասին: Պայմանագրով ամրագրված առք ու վաճառքի քանակի և ակնկալվող սպառման միջև շեղումների դեպքում կողմերը ավելցուկը և պակասորդը կգնեն և կվաճառվեն Օր-առաջ շուկայում: Իսկ Օր-առաջ շուկայի և իրական ժամանակում առք և վաճառքի ծավալների միջև բոլոր փաստացի շեղումների՝ անհաշվեկշռույթների առևտուրը կիրականացվի Հաշվեկշռման շուկայում:

Արտադրողները անցումային շրջանում կբաժանվեն չորս հիմնական խմբերի՝ ինչպես ներկայացված է Մեծածախ շուկայի մասնակիցները ենթազբյուրի Էլեկտրաէներգիա արտադրողներ բաժնում, և դրանցից նախանշված մասը կմասնակցի նաև Հզորության շուկայում: Հզորության շուկայում մասնակցող արտադրողների գները, ինչպես արդեն նշել ենք, կշարունակի կարգավորել Հանձնաժողովը կամ կգործեն ՊՄԳ պայմանագրերի

շրջանակում ամրագրված գները: Հզորության շուկայում մասնակցող արտադրողները կպարտավորվեն նաև Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող հատվածում Հանձնաժողովի սահմանած սակագներով էլեկտրաէներգիա վաճառել իրենց հզորության համար վճարող գնորդներին: Ուղիղ պայմանագրերի շուկայում օր-առաջ առևտրի խթանման նպատակով կթույլատրվի կանխատեսվող էլեկտրաէներգիայի արտադրության միայն 90%-ի վաճառքը, մնացած էլեկտրաէներգիայի վաճառքը կիրականացվի Օր-առաջ շուկայում: Այն արտադրողները, որոնք չեն մասնակցի Հզորության շուկայում կկարողանան մասնակցել Ուղիղ պայմանագրերի շուկայի չկարգավորվող հատվածում պայմանագրեր կնքելով Թրեյդերների, Անկախ մատակարարների և այլ հավանական գնորդների հետ, այդ թվում արտահանելու՝ չկարգավորվող գներով: Հանձնաժողովը պետք է սահմանի, թե որքան էլեկտրաէներգիա կթույլատրի վաճառել յուրաքանչյուր ԿԷԱ կայանի Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող հատվածում:

Բացի վերը նշվածը, առանձին անցումային մեխանիզմ պետք է նախատեսվի ՀՀ կառավարության հետ ՊՄԳ պայմանագրեր կնքած ՉԷԱ կայանների համար: Այդ մեխանիզմը պետք է վերաբերի նաև «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն էլեկտրաէներգիայի գնման երաշխիք ունեցող ԿԷԱ կայաններին: Անցումային մեխանիզմի անհրաժեշտությունը կապված է այն հանգամանքի հետ, որ նշված երկու խմբերի արտադրողներին նոր պայմաններով շուկա մուտքի և լրացուցիչ ռիսկեր վերցնելու պահանջը կարող է հանգեցնել ՀՀ կառավարության հետ վերջիններիս կնքած ՊՄԳ պայմանագրերի վերանայմանը կամ դադարեցմանը՝ համապատասխան իրավական և ֆինանսական հետևանքներով: Նույնը վերաբերում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն էլեկտրաէներգիայի գնման երաշխիք ունեցող ԿԷԱ կայաններին, որոնք կարող են նման որոշումը բողոքարկել դատարանում՝ պահանջելով հնարավոր ֆինանսական կորուստների ամբողջական փոխհատուցում: Նկարագրված ռիսկերից գերծ մնալու համար առաջարկվում է, որ ՉԷԱ և ԿԷԱ կայանների հետ էլեկտրաէներգիայի գնման ուղիղ պայմանագրեր կնքի բացառապես Երաշխավորված մատակարարը, և նույն ժամանակ սահմանափակվի նման արտադրողների՝ այլ գնորդներին հզորություն կամ էլեկտրաէներգիա վաճառելու կամ արտահանելու իրավունքը: Նման մոտեցումը ենթադրում է նաև, որ ՉԷԱ և ԿԷԱ կայանները չեն մասնակցի Օր-առաջ և Հաշվեկշռման շուկաներում:

Ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող հատվածում Համակարգի օպերատորը կշարունակի արտադրական ռեսուրսների կարգավարումը՝ էլեկտրաէներգիայի արտադրությունը և հաղորդումը նվազագույն ծախսերով ապահովելու համար (սպառողների պահանջարկը ծածկելու համար արտադրողներին ընտրելով ցածրից դեպի բարձր գին), պայմանով որ ապահովվում է նաև համակարգի հուսալիությունն ու անվտանգությունը:

### **3.1.2. ՕՐ-ԱՌԱՋ ՇՈՒԿԱ**

Բազմաթիվ մրցունակ մեծածախ շուկաներում Օր-առաջ շուկան կարևորագույն դեր է խաղում էլեկտրաէներգիայի գների որոշման համար: Վաճառողները հաջորդ օրվա համար ժամային կտրվածքով քանակական և գնային առաջարկներ են ներկայացնում Շուկայի օպերատորին: Հայտերի համար կարող են կիրառվել նաև այլ չափանիշներ, ինչպիսիք են արտադրության մեկնարկի համար անհրաժեշտ ժամանակը, մեկնարկային ծախսերը, էլեկտրաէներգիայի տարբեր քանակի արտադրության դեպքում գները և այլն: Սովորաբար, հաշվի առնելով յուրաքանչյուր արտադրողի և հաղորդման ցանցի տեխնոլոգիական սահմանափակումներն ու համակարգում կորուստները, Համակարգի օպերատորը որոշում է արտադրողների այն խումբը, որը պետք է մասնակցի հաջորդ

օրվա էլեկտրաէներգիայի արտադրությանը, իսկ Շուկայի օպերատորն ապահովում գնորդների և վաճառողների միջև համապատասխան պայմանագրերի կնքումը:

Օր առաջ շուկայի համար կան շուկայական գնի սահմանման երկու հիմնական մոտեցումներ դրանք «համընդհանուր քլիրինգային գնի» կամ «ըստ ներկայացված հայտի գնի» մոտեցումներն են: Մրցունակ մեծածախ շուկաների մեծ մասն օգտագործում է «համընդհանուր քլիրինգային գնի» մոտեցումը, երբ ամենաբարձր մարժինալ գնով ընտրված արտադրողի գնով որոշվում է շուկայի քլիրինգային գինը և ընտրված բոլոր արտադրողները այդ ժամվա ընթացքում արտադրված ամբողջ էլեկտրաէներգիայի համար վճարվում են հենց այդ գնով: Ավելի պարզ ասած, այս մոտեցման դեպքում առաջինն ընտրվում է ամենաէժան գին տված կայանը, այնուհետև հաջորդ ամենաէժանը, այնուհետև հաջորդ ամենաէժանը՝ մինչև բավարարվի ամբողջ պահանջարկը: Շուկան համարվում է փակված, երբ առաջարկը համապատասխանում է պահանջարկին և ինչպես նշվեց, վերջին ընտրած արտադրողի գինը սահմանում է շուկայի քլիրինգային գինը, որով վճարվում են տվյալ ժամվա ընթացքում էլեկտրաէներգիա արտադրված բոլոր կայանները: Կիրառվում է նաև «ըստ ներկայացված հայտի գնի» մոտեցումը, ըստ որի նույն սկզբունքով ընտրված արտադրողներին վճարվում է իրենց հայտի փաստացի գինը, սակայն համարվում է, որ այս մոտեցումը նվազեցնում է շուկայի ընդհանուր արդյունավետությունը և այդ պատճառով այն լայն կիրառություն չունի:

Հարկ է նաև նշել, որ տվյալ օրվա համար գները կարող են ձևավորվել Օր-առաջ շուկայում՝ գործառնական օրվանից մեկ օր առաջ, կամ Օրական շուկայում՝ գործարքների օրը, մեկ ժամվա կամ ավելի փոքր ժամանակահատվածի համար: Զանի որ անցումային ժամանակահատվածում Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայում գործարքների մեծ մասը տեղի է ունենալու ուղիղ պայմանագրերի շրջանակում, Օրական շուկան չի կարողանա կայանալ և շուկայի այս սեգմենտի ներդրում անցումային ժամանակահատվածում չի նախատեսվում:

Օր-առաջ շուկայում Շուկայի օպերատորը ամրագրում է առաջարկի և պահանջարկի հայտերի հիման վրա ձևավորված գները, հաշվի առնելով Համակարգի օպերատորի կողմից որոշված հաղորդման ցանցի սահմանափակումները և անհրաժեշտ Համակարգային օժանդակ ծառայությունները՝ ժամային կտրվածքով՝ 24 գործառնական ժամերից յուրաքանչյուրի համար: Օր-առաջ և իրական ժամանակում գները, որպես կանոն, չեն համընկնում, քանի որ օր-առաջ պահանջարկը և առաջարկը իրական ժամանակում միշտ տարբեր են: Դրա պատճառ կարող են հանդիսանալ օրինակ՝ եղանակը, ինչի արդյունքում պահանջարկը կարող է ավելի բարձր կամ ցածր լինել կանխատեսվածից, արտադրող կայաններում վթարները կամ հաղորդման ցանցի խափանումները և այլն: Ուստի իրական ժամանակում կարող են օգտագործվել այլ արտադրական ռեսուրսներ, քան օր-առաջ ժամանակահատվածում պլանավորվել էր: Օր-առաջ շուկան սովորաբար համարվում է ֆինանսական շուկա, որում ընտրված արտադրողները իրական ժամանակում էլեկտրաէներգիա արտադրելու ֆինանսական պարտավորություն են ստանձնում, իսկ դրա անհնարինության դեպքում նրանք էլեկտրաէներգիան գնում են Հաշվեկշռման շուկայում և կատարում իրենց պարտավորությունը: Նմանապես, եթե գնորդը ավել է օգտագործում իրական ժամանակում, քան նախատեսված է օր-առաջ շուկայի պայմանագրով, նա լրացուցիչ էլեկտրաէներգիան գնում է Հաշվեկշռման շուկայում ձևավորված գներով: Օր-առաջ գները, որպես կանոն, ավելի ցածր են Հաշվեկշռման շուկայի գների համեմատությամբ և սովորաբար կիրառվում են գնորդների և վաճառողների կողմից իրենց գործարքները հեջավորելու համար: Բազմաթիվ լավ զարգացած մրցունակ շուկաներում օր-առաջ պայմանավորված գներով են տեղի ունենում գործարքների մեծ մասը:

Մրցակցային շուկայում, որտեղ գները չեն կարգավորվում, արտադրողների մոտ կարող է գները ոչ մրցունակ մակարդակի բարձրացնելու գայթակղություն առաջանալ, հատկապես այն շուկաներում, որտեղ առկա չեն ավելցուկային հզորություններ պահանջարկի բավարարման համար: Արտադրողների նման վարքաքիճը կարող է գների անհարկի բարձրացման առիթ հանդիսանալ և բացասական ազդեցություն ունենալով սպառողների վրա: Նման իրավիճակները կանխարգելելու համար էական զսպող դեր ունեն շուկայի կանոնները և մշտադիտարկման մեխանիզմները: Կան շուկայի մշտադիտարկման բազմաթիվ սկզբունքներ և շուկայի մասնակիցների վարքագիծը կառավարելու գործիքներ: Օրինակ, կարող է որոշվել «համեմատական գին» և կիրառվել գնահատելու համար արտադրողների՝ շուկայում առաջարկվող գների ողջամտությունը: «Համեմատական գինը» սովորաբար բաղկացած է վառելիքի ծախսից, շահագործման և սպասարկման ծախսերի փոփոխական բաղադրիչից, բնապահպանական ծախսերից և շահույթից:

Ինչպես արդեն նշվեց, անցումային ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի գործարքների մեծ մասը Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայում տեղի է ունենալու ուղիղ պայմանագրերի շրջանակում, որի արդյունքում Օր-առաջ շուկան կկրի նաև որոշակի առաջնային Հաշվեկշռման շուկայի դեր՝ կնքված ուղիղ պայմանագրերի և արդեն իսկ օր-առաջ կնքվող պայմանագրերի ծավալների շեղումների դեպքում: Այդ պատճառով, Ուղիղ պայմանագրերի շուկայի և Օր-առաջ շուկայի առաջարկվող 90/10 ծավալների հարաբերակցությունը պետք է դիտարկվի որպես փոփոխական մեծություն՝ Օր-առաջ շուկայում հաշվեկշռման անհրաժեշտությունը նվազեցնելու նպատակով:

Ինչպես նշվեց, նախատեսվում է, որ Ուղիղ պայմանագրերի շուկայում կիրականացվեն էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի գործարքների 90%-ը, մնացած 10%-ի առք ու վաճառքը կիրականացվի Օր-առաջ շուկայում: Ավելի ստույգ լինելու համար հարկ է նշել, որ 90%-ը կլինի միայն միջին ցուցանիշ բոլոր ՉԷԱ արտադրողների համար և Հանձնաժողովը յուրաքանչյուր ՉԷԱ կայանի համար յուրաքանչյուր տարի կսահմանի Օր-առաջ շուկայում վերջինիս մասնակցության չափը՝ շուկայի ավելի արդյունավետ աշխատանք ապահովելու նպատակով: Նույն ժամանակ ՄԷԱ կայանները կամ Թրեյդերները որևէ սահմանափակում չեն ունենա շուկայում մասնակցության հարցում, ինչը նշանակում է, որ Օր-առաջ շուկայի մասնաբաժինն իրականում մի փոքր ավելի մեծ կլինի սկզբնական շրջանում և շուկայի զարգացմանը զուգընթաց աստիճանաբար կաճի: Ամեն դեպքում, ՉԷԱ կայանների մի մասը իրենց անհրաժեշտ հասույթի պահանջից զգալի բարձր եկամուտներ կստանան, ինչը ազդեցություն կունենա նաև սպառողական գների վրա: Նման իրավիճակից խուսափելու նպատակով ՉԷԱ կայանների դեպքում առաջարկվում է, որ Հանձնաժողովը Օր-առաջ շուկայում ստացած եկամուտների լրացուցիչ մասը նախապես որոշված մեխանիզմով նվազեցնի տվյալ կայանների հզորությունների դրույքից՝ դրանց սահմանման ընթացքում, այդպիսով համարժեքորեն նվազեցնելով վերջիններիս կողմից Հզորության շուկայում ստացվելիք եկամուտները: Նման մոտեցումը սպառողական գների կայունություն կապահովի մինչև մրցակցային շուկային լիարժեք անցումը:

### **3.1.3. ՀԱՇՎԵԿՇՐՈՄԱՆ ՇՈՒԿԱ**

Ինչպես նշվեց, գործարքի օրը արտադրության քանակները և գները տարբերվելու են Օր-առաջ շուկայում մասնակիցների կողմից պայմանագրերով սահմանվածից: Նմանապես, կարող են նաև տարբերվել շուկայի մասնակիցների միջև ուղիղ պայմանագրերով սահմանված արտադրության քանակները և գները արդեն իսկ օր-առաջ կտրվածքում: Այս տարբերությունները պետք է հավասարակշռվեն կամ

հաշվարկվեն օր-առաջ շուկայում: Այդպիսով, նախատեսվում է հավասարակշռման կամ վերահաշվարկի երկու մակարդակ, մեկը՝ կնքված Ուղիղ պայմանագրերի և Օր-առաջ շուկայի միջև, մյուսը՝ Օր-առաջ շուկայի և իրական ժամանակով գործարքների միջև: Օր-առաջ շուկայի և իրական ժամանակի գործարքների միջև տատանումները հաշվարկվում են Հաշվեկշռման շուկայում:

Հայաստանում անցումային փուլում չի ակնկալվում լիարժեք Հաշվեկշռման շուկայի ստեղծում մրցակցային գներով՝ առաջարկի և պահանջարկի առկա կառուցվածքի առանձնահատկություններից ելնելով: Հաշվեկշռման շուկան կգործի հաշվեկշռման մեխանիզմի հիման վրա, որը կհաշվարկի օր-առաջ և իրական ժամանակի բեռի գրաֆիկների միջև շեղումները: Քանի որ այս հաշվեկշռման մեխանիզմը ազդեցություն կունենա Օր-առաջ շուկայի մասնակիցների վարքագծի վրա, այն պետք է մանրամասնորեն սահմանվի մեծածախ շուկայի առևտրային կանոններում և ապահովի պատշաճ գնային ազդակներ՝ շեղումների պատճառ հանդիսացողներին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու և հաշվեկշռման գներն օր-առաջ ձևավորվող գների համեմատությամբ ավելի բարձր պահելու համար: Այս մեխանիզմի փոխարինումը շուկայական գնագոյացմամբ կարող է տեղի ունենալ ժամանակի ընթացքում, երբ հստակ կլինեն նման շուկայի այս սեգմենտի հնարավոր մասնակիցները, ծավալներն ու գները:

### **3.2 Համակարգային օժանդակ ծառայություններ**

Համակարգային օժանդակ ծառայությունները ապահովում են ակտիվ և ռեակտիվ էներգիայի հաղորդումը արտադրողներից դեպի սպառողներ և անհրաժեշտ են համակարգի աշխատանքային հուսալիության ու անվտանգության ապահովման համար: Յուրաքանչյուր համակարգի դեպքում, հաշվի առնելով դրա յուրահատկությունները, պահանջվում են տարբեր Համակարգային օժանդակ ծառայություններ, որպեսզի Համակարգի օպերատորը կարողանա ապահովել անհրաժեշտ հաճախականությունը, կարգավորվել լարումները և այլ անհրաժեշտ հարաչափեր: Ընդհանուր առմամբ Համակարգային օժանդակ ծառայությունները ներառում են հաճախականության և լարման ապահովումը, տարբեր տիպի պահուստները հաշվեկշռման համար և գրոյից համակարգի գործարկման ծառայությունը:

Միշտ չէ, որ այս ծառայությունների գնումներն իրականացվում են մրցակցային եղանակով: Բազմաթիվ մրցունակ շուկաներում լարման ապահովման և գրոյից համակարգի գործարկման ծառայությունները դեռևս գնվում են կարգավորվող սակագներով: Որոշ շուկաներում պահուստները գնվում են առանձին մրցութային կարգով, իսկ մյուսներում՝ դրանց արժեքը մաս է կազմում էլեկտրաէներգիայի արժեքի՝ նվազագույնի հասցնելով ընդհանուր ծախսերը:

Հայաստանի պարագայում այդ ծառայությունները կազմն արդեն իսկ հստակեցվել է և սահմանվել որպես (1) հաճախականության և փոխհոսքերի կարգավորման, (2) հաշվեկշռման, (3) լարման կարգավորման և (4) լրիվ մարման դեպքում էներգահամակարգի վերականգման ծառայությունների ամբողջություն: Դրանց արժեքը ներկայումս ներառված է կայանների ընդհանուր ծախսերի մեջ: Համակարգային ծառայությունների մատուցման արդյունավետությունը բարձրացնելու համար սակայն դրանք աստիճանաբար պետք է առանձնացվեն ընդհանուր ծախսերից և սահմանեն որպես առանձին ծառայությունների վճարներ: Այս դեպքում ևս անցումային ժամանակաշրջանում մրցակցային եղանակով գնումների իրականացումը հնարավոր չէ, ուստի ծառայությունները, որոնց մատուցման ծախսերը հնարավոր կլինի տարանջատել ընդհանուրից, կմատուցվեն Հանձնաժողովի կողմից սահմանած սակագներով՝ Համակարգի օպերատորի պահանջի դեպքում:

### 3.3 Վճարումների երաշխավորում

Ներկայումս Էլեկտրաէներգիա արտադրողների և ծառայություններ մատուցողների վճարումները երաշխավորվում են ՅԷՑ-ի հատուկ հաշվի մեխանիզմի ներքո, որի միջոցով ապահովում է առաքված Էլեկտրաէներգիայի (հզորության) և մատուցված ծառայությունների համար ժամանակին և ամբողջական վճարումը:

Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի ներքո ՅԷՑ-ը կշարունակի նույն մեխանիզմով ապահովել իր կողմից վճարումների երաշխավորումը: Սակայն շուկայի նոր մասնակիցների՝ Թրեյդերների, Անկախ մատակարարների և Որակավորված սպառողների համար անհրաժեշտ է ստեղծել արտադրողներին և ծառայություններ մատուցողներին վճարումների երաշխավորման նոր մեխանիզմ: Բազմաթիվ երկրներում այս դերակատարումը ստանձնում են քլիրինգային կենտրոնները, որոնք սովորաբար ֆինանսական և ֆիզիկական շուկաներում կողմերի միջև կնքված պայմանագրերի կատարումը երաշխավորում են՝ հանդես գալով որպես գնորդ յուրաքանչյուր վաճառողի և որպես վաճառող յուրաքանչյուր գնորդի համար:

"NASDAQ OMX Հայաստան" ԲԲԸ-ն<sup>5</sup> Հայաստանում միակ կառույցն է, որը կարող է ստանձնել քլիրինգային կենտրոնի դեր, սակայն սկզբնական ժամանակահատվածում այն ի վիճակի չի լինի այսպիսի ծառայություններ մատուցել համապատասխան իրավական դաշտի բացակայության և Էլեկտրաէներգիայի առջի ու վաճառքի գործարքների իրականացման փորձառության բացակայության պատճառով: Հետագա ժամակահատվածում նման ծառայությունների մատուցման հնարավորությունը պետք է քննարկվի "NASDAQ OMX Հայաստան" ԲԲԸ-ի և Հայաստանի Կենտրոնական Բանկի հետ:

Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի առաջին փուլում չվճարման ռիսկերը կարող են ապահովվել յուրաքանչյուր գնորդի և բոլոր վաճառողների (բացի ՅԷՑ-ից) միջև պարզ բանկային երաշխիքի բազմակողմ պայմանագրեր կնքելու միջոցով: Այդպիսի պայմանագրերը կապահովեն գնորդների կանխատեսված միջին ամսական վճարումները: Նման բանկային երաշխիքի արժեքը մոտավոր գնահատականով գնորդների համար կկազմի իրենց կողմից գնվող միջին ամսական Էլեկտրաէներգիայի արժեքի շուրջ 0.35%-ը:

### 3.4 Շուկայի ծրագրային ապահովումը

Էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կառուցվածքին ացնումը և առևտրային մեխանիզմի լիարժեք իրագործումը անհնար կլինի առանց շուկայի ծրագրային ապահովման, որը շուկայի մասնակիցներին կապահովի Էլեկտրոնային հաղորդակցություն, պայմանագրերի կազմման, առևտրի իրականացման և հաշիվների դուրս գրման ժամանակակից գործիքներով: Շուկայի ծրագրային ապահովումը կկառավարի Շուկայի օպերատորը՝ ներգրավելով մեծածախ շուկայի բոլոր մասնակիցներին և ծառայություն մատուցողներին: Մինչև առաջարկվող առևտրի մեխանիզմին անցնելը անհրաժեշտ է ունենալ առնվազն 6 ամիս փորձական շրջան, որի ընթացքում շուկան կգործի նոր կանոններով, սակայն առանց մասնակիցների համար ֆինանսական պարտավորությունների: Չուզահեռաբար, Համակարգի օպերատորը պետք է լիովին ներդնի GTMax մոդելը կամ կիրառի այլ համարժեք ծրագրային ապահովում՝ կարգավարման օպտիմալ ռեժիմների գնահատման համար:

<sup>5</sup> <http://nasdaqomx.am/>

### 3.5 ՇՈՒԿԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը Էներգետիկայի ոլորտում մրցակցության և արդյունավետ գործողությունների խթանումն է, ինչպես նաև մրցունակ միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Օրենքի համաձայն Հանձնաժողովը, որպես այս ոլորտի անկախ կարգավորող, պարտավորությունն ունի մշտադիտարկելու լիցենզավորված անձանց գործունեությունը, ինչպես նաև վերահսկելու օրենքի, իր սահմանած ենթաօրենսդրական ակտերի և լիցենզիայի պայմանների կատարումը: Հանձնաժողովն իրավունք ունի այդ նպատակով տեղեկություն և հաշվետվություններ ստանալ լիցենզավորված անձանցից, իսկ խախտումներ հայտաբերելու դեպքում նաև կիրառել օրենքով սահմանված տույժեր:

Շուկայի ազատականացմանը զուգընթաց անհրաժեշտ կլինի զարգացնել Հանձնաժողովի՝ շուկայի գործունեության և լիցենզավորված անձանց վարքագծի մշտադիտարկման կարողությունները, հիմնականում շուկայում գերիշխող դիրք ունեցող մասնակիցների կողմից շուկայական դիրքի հնարավոր չարաշահումները բացահայտելու, ինչպես նաև շուկայի կանոնների շարունակական կատարելագործման միջոցով դրանք կանխարգելելու համար: Այդ նպատակով անհրաժեշտ կլինի մշակել Էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի աշխատանքի մշտադիտարկման նոր գործիքակազմ, այդ թվում անհրաժեշտ հաշվետվությունների ձևերը, դրանց ներկայացման պարբերականությունը, մշտադիտարկման ենթակա հարցերի շրջանակը և վերլուծության մեխանիզմները՝ պարզելու Ուղիղ պայմանագրերի, Օր-առաջ և Հաշվեկշռման շուկաներում առաջացող խնդիրները, ինչպես նաև գնահատելու դրանց ազդեցությունը սպառողներին մատակարարվող Էլեկտրաէներգիայի գների վրա:



# ԲԱԺԻՆ 3. ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

## 4.1 Տարեկան պլանավորում

### 4.1.1 ՀՈՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Յուրաքանչյուր տարի՝ տարեկան կտրվածքով, Համակարգի օպերատորը նախապես սահմանված մեթոդաբանության միջոցով կորոշի, թե որքան հզորություն է անհրաժեշտ սպառողների պիկային պահանջարկի բավարարման համար (ներառյալ պահուստները)՝ ըստ ամիսների և ըստ արտադրող կայանների՝ հզորության հաշվեկշիռը կազմելու նպատակով: Այնուհետ Համակարգի օպերատորը կառաջարկի Հանձնաժողովին հաստատել արտադրողներից այդ հզորությունները գնելու և շուկայի մասնակիցների կողմից դրանց դիմաց վճարելու չափաբաժինները: Արտադրողներից հզորությունը կգնվի ուղիղ պայմանագրերի հիման վրա՝ Հանձնաժողովի հաստատած չափաբաժիններին համապատասխան: Համապատասխան պայմանագրերի կնքումը կապահովի Շուկայի օպերատորը: ՉԷԱ կայանները պայմանագիր կկնքեն միայն Երաշխավորված մատակարարի հետ:

Համակարգի օպերատորը պետք է մշակի համապատասխան մոտեցում յուրաքանչյուր գնորդի՝ Երաշխավորված մատակարար, Որակավորված սպառողներ, Անկախ մատակարարներ և այլ գնորդներ (բացառությամբ Թրեյդերների), պիկային պահանջարկը (ներառյալ պահուստները) բավարարելու համար գնման ենթակա հզորության չափը որոշելու նպատակով: Այն կարող է որոշվել գնորդի՝ համընկնող պիկային պահանջարկի նախորդ տարվա փաստացի կամ հաջորդ տարվա համար կանխատեսվող մեծության և համակարգի ընդհանուր պիկային պահանջարկի հարաբերակցությամբ:

Համակարգի զարգացման պլանավորման համար Համակարգի օպերատորը կիրականացնի երկարաժամկետ կտրվածքով հաշվարկներ՝ սահմանելու համար համակարգի երկարաժամկետ հուսալիության կարիքները, ներառյալ նոր արտադրական ռեսուրսների և հաղորդման ցանցերի կառուցման անհրաժեշտությունը: Չարգացման պլանավորումը հաշվի կառնի պահանջարկի հետագա աճը, գործող արտադրող կայանների շահագործումից դուրս գալու հանգամանքը, հաղորդման ցանցում առաջացող սահմանափակումները և այլ անհրաժեշտ փոփոխականներ: Չարգացման պլանավորումը կիրականացվի շուկայի մասնակիցների ներգրավմամբ՝ ճարտարագիտական և տնտեսագիտական ժամանակակից մոդելավորման ծրագրերի միջոցով, հաշվի առնելով նաև ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից Էներգետիկայի բնագավառում իրականացվող քաղաքականությունը: Այս գործընթացն արդեն բավարար չափով նկարագրված է Էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոններում:

### 4.1.2 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Համակարգի օպերատորը յուրաքանչյուր տարի կկազմի նաև Էլեկտրաէներգիայի կանխատեսվող հաշվեկշիռը՝ Հզորությունների պլանավորում գլխում ներկայացված սկզբունքների ներքո, նպատակ ունենալով նվազագույնի հասցնել Էլեկտրաէներգիայի արտադրության և հաղորդման ծախսերը: Ինչպես արդեն նշել ենք, այն կայանները, որոք ստանում են հզորության վճարներ, կպարտավորվեն նաև Էլեկտրաէներգիա վաճառել դրա համար վճարողներին: Նույն ժամանակ, Երաշխավորված մատակարարը և Անկախ մատակարարները իրենց սպառողների պահանջարկը բավարարելու համար այդ Էլեկտրաէներգիան գնելու պարտավորություն կստանան:

Հարկ է նաև նշել, որ Համակարգի օպերատորի կողմից համակարգի զարգացման պլանավորման ընթացքում էլեկտրաէներգիայի կանխատեսվող պահանջարկը նվազագույն ծախսերով երկարաժամկետ կտրվածքում բավարարման հարցը կունենա առանցքային նշանակություն:

## **4.2 Սակագների սահմանում**

### **4.1.3 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀՉՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ներկայումս էլեկտրաէներգիայի արտադրության գները կարգավորվում են Հանձնաժողովի կողմից: ԿԷԱ կայանների դեպքում մասնավորապես, սահմանվում է յուրաքանչյուր կայանի անհրաժեշտ հասույթը և կանխատեսվող էլեկտրաէներգիայի արտադրությունն ու պայմանագրային և տնօրինելի հզորությունները: Անհրաժեշտ հասույթն այնուհետև դասակարգվում է ըստ փոփոխական և հաստատուն ծախսերի, և հաշվի առնելով էլեկտրաէներգիայի և հզորության կանխատեսվող հաշվեկշիռը, սահմանվում են վերջիններիս էլեկտրաէներգիայի և հզորության դրույթները: Արտադրողները յուրաքանչյուր ամիս վճարվում են տվյալ ամսում փաստացի առաքած էլեկտրաէներգիայի և պատրաստ հզորության համար:

Սակագների հաշվարկման այս մոտեցումը ԿԷԱ կայանների դեպքում կպահպանվի նաև անցումային ժամանակահատվածում, սակայն հզորության դրույթի սահմանման ժամանակ անհրաժեշտ հասույթից նախապես կնվազեցվի այն կանխատեսվող լրացուցիչ եկամուտը, որը տվյալ կայանը կստանա Օր-առաջ շուկայում իր էլեկտրաէներգիան վաճառելու արդյունքում: Տարեկան արդյունքներով կանխատեսվող և փաստացի ստացված եկամուտները կարող են նաև հավասարակշռվել:

ՉԷԱ կայանների հզորությունների դեպքում հաշվի կառնվեն վերջիններիս ՊՄԳ պայմանագրերում և լիցենզիաների պայմաններում հզորության դրույթի որոշման համար ընդունված մոտեցումները: Ինչ վերաբերում է ԿԷԱ կայաններին, ապա վերջիններս հզորության վճարներ չեն ստանա: ՄԷԱ կայանների համար հզորության վճար ստանալու հանգամանքը նախ կապված կլինի՝ կարգավարվող հզորությունն ապահովելու ունակությունից, ապա նաև Համակարգի օպերատորի կողմից իրականացվող՝ սպառողների պահանջարկը բավարարելու համար անհրաժեշտ հզորությունների պլանավորման մոտեցումներից:

### **4.1.4 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՆ**

Արտադրողների էլեկտրաէներգիայի և հզորության վճարների սահմանման ընդհանուր սկզբունքները արդեն իսկ ներկայացված են նախորդ բաժնում: Ինչպես արդեն նշել ենք, անցումային փուլում ՉԷԱ կայանները իրենց էլեկտրաէներգիայի միայն 90%-ը կվաճառեն կարգավորվող գներով, մնացած էլեկտրաէներգիան կվաճառվի Օր-առաջ շուկայում՝ յուրաքանչյուր ժամի քլիրինգային մարժինալ գնով:

Սակագների հաշվարկման այս մոտեցումը անցումային ժամանակահատվածում անփոփոխ կմնա ԿԷԱ կայանների համար: ՉԷԱ կայանների դեպքում կկիրառվեն ՊՄԳ պայմանագրերի և լիցենզիաների պայմանների շրջանակում արդեն իսկ նախանշված սակագները, ԿԷԱ կայանների դեպքում՝ Հանձնաժողովի համապատասխան մեթոդաբանությամբ սահմանվող սակագները, իսկ ՄԷԱ կայանների էլեկտրաէներգիայի սակագները չեն կարգավորվի ընդհանրապես:

#### 4.1.5 ՀԱՂՈՐԴՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԻ ՕՊԵՐԱՏՈՐՆԵՐ

Հաղորդման ցանցի օպերատորի (ԲԷՑ)՝ Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայությունների մատուցման արժեքի որոշման մոտեցումների փոփոխություն անցումային շուկայի կառուցվածքի համար չի նախատեսվում՝ այն ինչպես և այժմ ամբողջությամբ կկարգավորվի Հանձնաժողովի կողմից ըստ դրամ/կՎտժ դրույքի:

Բաշխման ցանցի օպերատորի (ՅԷՑ)՝ Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայությունների մատուցման հաշվարկի մոտեցումներում հստակեցման և սահմանման կարիք ունեն 0,38/0,22 կՎ լարման սպառողների բաշխման ծառայության մատուցման սակագները, առանց որոնց Անկախ մատակարարների մուտքը շուկա հնարավոր չի լինի: Նշված լարման սպառողների համար բաշխման ծառայության մատուցման սակագները կհստակեցվեն և կսահմանվեն մինչև շուկայի նոր կառուցվածքին անցնելը:

#### 4.1.6 ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐ

Երաշխավորված մատակարարը Էլեկտրաէներգիա է գնում արտադրողներից իր սպառողների անունից, և դրա հետ կապված բոլոր ծախսերի համար հատուցում ստանում վերջիններիս կողմից: Սպառողների սակագները կարող են լինել ուղղակի ծավալային (ըստ կՎտժ-ի) և տարբերակվել ըստ ժամերի, եթե հաշվառման համակարգը դա թույլ է տալիս: Հզորության համար վճարները կարող են կապակցվել սպառողի պահանջարկի (կՎտ) օգտագործման, կամ պահանջարկի և Էլեկտրաէներգիայի օգտագործման համակցման հետ: Շուկայի կարգավորվող կառուցվածքի դեպքում որպես կանոն օգտագործվում է սակագնային կարգավորման «ծառայության արժեքի» մոդելը: Սակայն մրցունակ շուկաներին անցնելիս սպառողներից ծախսերի փոխհատուցման մոտեցումը զգալիորեն տարբերվում է: Նախ և առաջ այն կախված է, թե արդյոք առկա են հզորության շուկաներ, թե միայն Էլեկտրաէներգիայի շուկաներ:

Հայաստանում ներկայումս Էլեկտրաէներգիայի մատակարարման համար կիրառվում է միադրույք սակագին (դրամ/կՎտժ) սպառողների բոլոր խմբերի համար՝ ըստ լարման մակարդակների, նաև ցերեկ-գիշեր տարբերակմամբ (գիշերային սակագինը ցերեկայինից էժան է): Իդեալական տարբերակում վերջնական սպառողի համար սակագինը պետք է լինի երկդրույք, բաղկացած Էլեկտրաէներգիայի դրույքից (դրամ/կՎտժ) և հզորության դրույքից դրամ/կՎտ<sup>6</sup>, որն այնուհետև տարբերակվում է ըստ յուրաքանչյուր սպառողական խմբի սպառման առանձնահատկությունների և ծառայությունների դասակարգման: Բացի այդ, խոշոր սպառողների համար կարող են կիրառվել առանձին սակագներ ռեակտիվ էներգիայի համար՝ ինդուկցիոն բեռի նվազեցման նպատակով:

Շուկայի կայացման տեսանկյունից առավել կարևոր է Երաշխավորված մատակարարի կողմից խոշոր սպառողներին առաքվող սակագների կառուցվածքի բարելավումը, քանի որ դա որոշիչ կլինի վերջիններիս՝ մեծածախ շուկա մուտք գործելու հարցում որոշում կայացնելու համար: Երաշխավորված մատակարարի սակագինը սպառողների այն խմբի համար, որն իրավունք ունի Էլեկտրաէներգիա գնել ուղղակիորեն մրցունակ շուկայից, պետք է ընտրվեն մեծ ուշադրությամբ՝ ապահովելով սպառողների համար ճիշտ ազդակներ, որպեսզի նրանք ետ չկանգնեն մրցունակ շուկայի ընտրությունից:

<sup>6</sup> Մովորաբար սակագները բաղկացած են երեք մասից՝ Էլեկտրաէներգիա, հզորություն և սպառողների վճարներ: Սպառողների վճարների միջոցով փոխհատուցվում են սպառողներին վերաբերող վճարները: Երբ հաշվառումը չի ներառում պահանջարկը (կՎտ), հզորության ծախսերը ներառվում են Էլեկտրաէներգիայի դրույքում:

Այժմ խոշոր սպառողների սակագներում էլեկտրաէներգիայի արտադրության ծախսերը ներառվում են տարեկան միջինացված արժեքով՝ անկախ տվյալ ժամանակահատվածի էլեկտրաէներգիայի արտադրության ծախսերի իրական մակարդակից: Սա նշանակում է, որ այն խոշոր սպառողները, որոնք ավելի շատ են սպառում, երբ էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելի բարձր արժեք ունի (օրինակ՝ ձմռանը) սուբսիդավորվում են այն սպառողների կողմից որոնք ավելի շատ են սպառում, երբ էլեկտրաէներգիայի արտադրությունն ավելի ցածր արժեք ունի (օրինակ՝ ամռանը): Շուկայի մուտքի իրավունք ստանալուց հետո այն խոշոր սպառողները, որոնց պահանջարկի ժամանակահատվածը մեծապես համընկնում է էլեկտրաէներգիայի արտադրության ավելի ցածր արժեքի հետ բնականաբար մեծածախ շուկա մուտք գործելու ցանկությունն կհայտնեն, իսկ մնացածները չեն ցանկանա դուրս գալ շուկա գործող սակագնային համակարգի պահպանման դեպքում: Արդյունքում, եթե ներկայիս սակագների դեպքում սպառողների միջև ավելի ներխմբային սուբսիդավորում է իրականացվում, ապա շուկայի բացման դեպքում դա աստիճանաբար կվերածվի միջխմբային սուբսիդավորման՝ մեծացնելով մնացած սպառողական խմբերի սակագների վրա ճնշումը:

Վերը նշվածը հաշվի առնելով, շուկայի նոր կառուցվածքին անցնելուն զուգընթաց անհրաժեշտ կլինի նաև իրականացնել Երաշխավորված մատակարարի կողմից առնվազն խոշոր սպառողներին առաքվող էլեկտրաէներգիայի սակագների կառուցվածքի փոփոխություն՝ սահմանելով տարբերակված սեզոնային սակագներ էլեկտրաէներգիայի համար, առանձին սակագներ՝ հզորության և ռեակտիվ էներգիայի համար:

#### **4.1.7 ԱՆԿԱԽ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ ԵՎ ԹՐԵՅԴԵՐՆԵՐ**

Անկախ մատակարարների և Թրեյդերների կողմից առաքվող սակագների կարգավորման մեխանիզմ անցումային շուկայի կառուցվածքում չի նախատեսվում, վերջիններս կգործեն լիարժեք մրցակցության պայմաններում:

# ԲԱԺԻՆ 4. ԻՐԱՎԱՅԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

## 5.1 Մեծածախ շուկայի կանոններ և պայմանագրեր

### 5.1.1 ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հայաստանի Մեծածախ շուկայի առաջին առևտրային կանոնները<sup>7</sup> որպես մեկ միասնական փաստաթուղթ հաստատվել են 2017 թվականի օգոստոսին և ուժի մեջ նույն թվականի հոկտեմբեր ամսին: Այն ամբողջականացնելով մեծածախ շուկայի ներկայիս բոլոր առևտրային հարաբերությունները, նաև որոշակի փոքր ծավալով շուկայի ազատականացում է նախատեսել՝ Որակավորված սպառողներին հնարավորություն ընձեռելով ուղիղ պայմանագրեր կնքել ՎԷԱ փոքր կայանների, Հրազդան-5 կայանի և Հրազդանի ՋԷԿ-ի հետ կամ ներկրել էլեկտրաէներգիա: Ամեն դեպքում, ազատականացման այս աստիճանը շատ փոքր հնարավորություններ է ստեղծում շուկայական մեխանիզմների հետագա զարգացման համար և իր հիմքում ունի «Էներգետիկայի մասին» ՀՀ գործող օրենքի սահմանափակումները: Այսպիսով, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ ուժի մեջ մտնելուց հետո շուկայի նոր կառուցվածքի համար անհրաժեշտ է մշակել Մեծածախ շուկայի նոր առևտրային կանոններ: Համաձայն օրենքի նախագծի, Մեծածախ շուկայի առևտրային կանոնները պետք է սահմանեն հետևյալը՝

- 1) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի կառուցվածքը,
- 2) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի գործունեության սկզբունքները,
- 3) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների գրանցման կարգը,
- 4) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում առևտրի իրականացման կանոնները,
- 5) Էլեկտրական էներգիայի ներկրման եւ արտահանման կանոնները,
- 6) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում հայտերի եւ առաջարկների ներկայացման կանոնները,
- 7) ուղիղ պայմանագրերի, օր-առաջ եւ հաշվեկշռման շուկաների գործունեության կարգը,
- 8) Էլեկտրաէներգիայի, հզորության, համակարգային ծառայությունների հաշվառման ու վճարման կարգը,
- 9) Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում տվյալների պահպանմանը եւ թափանցիկությանը ներկայացվող պահանջները,
- 10) Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոններ եւ ընթացակարգեր:

<sup>7</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115608>

### 5.1.2 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հայաստանի Էլեկտրաէներգետիկական համակարգի առաջին Ցանցային Կանոնները<sup>8</sup> հաստատվել են 2017 թվականի մայիսին և ուժի մեջ մտել նույն թվականի հուլիս ամսից: Ընդհանուր առմամբ դրանք հենվում են ENTSO-ե պահանջների<sup>9</sup> վրա, սակայն նաև հարմարեցված են Հայաստանի ներկայիս Էլեկտրաէներգետիկական շուկայի կառուցվածքին: Այսպիսով, Էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները պետք է վերանայվեն շուկայի նոր կառուցվածքի առանձնահատկությունները հաշվի առնելու և ENTSO-ե պահանջների ավելի ընդարձակ համապատասխանությունն ապահովելու համար: Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության, Էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնները պետք է ներառեն հետևյալը՝

- 1) Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորումը,
- 2) Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարումը,
- 3) Էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորումը և կարգավարումը,
- 4) Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցին նոր հզորությունների միացումը,
- 5) Էլեկտրաէներգետիկական համակարգում Էլեկտրաէներգիայի հաշվառման համակարգերին ներկայացվող պահանջները,
- 6) Էլեկտրաէներգետիկական համակարգի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոններ եւ ընթացակարգեր:

### 5.1.3 ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ

Մեծածախ շուկայի պայմանագրերի օրինակելի ձևերը ներառում են կողմերի հարաբերությունները կարգավորող առանցքային դրույթները, որոնք անհրաժեշտ են Էլեկտրաէներգետիկական շուկայում առևտրի մեխանիզմների արդյունավետ իրագործման համար: Պայմանագրերի օրինակելի ձևերը, ինչպես և այժմ, կհաստատվեն Հանձնաժողովի կողմից: Կարևոր է, որ պայմանագրերի օրինակելի ձևերը ճշգրտորեն և արդարացիորեն արտացոլեն շուկայի մասնակիցների և շուկային ծառայություն մատուցողների իրավունքներն ու պարտականությունները և արդյունավետորեն հավասարակշռեն յուրաքանչյուրի ռիսկերը: Մեծածախ շուկայի նոր կառուցվածքի դեպքում Էլեկտրաէներգիայի առք ու վաճառքը տեղի է ունենալու Ուղիղ պայմանագրերի, Օր-առաջ և Հաշվեկշռման շուկաներում: Ինչպես կարգավորվող սակագներով, այնպես էլ կողմերի միջև բանակցությունների արդյունքում ձևավորված գներով կնքվող պայմանագրերը, ի թիվս այլ իրավունքների և պարտականությունների, պետք է սահմանեն ֆինանսական պատասխանատվությունն այդ պայմանագրերով նախատեսված Էլեկտրաէներգիայի առքի և վաճառքի ծավալներից շեղումների դեպքում, ինչը թերևս ներկայիս պայմանագրերի օրինակելի ձևերի Էական բացերից է: Ավելին, ներկայիս

<sup>8</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113654>

<sup>9</sup> [https://electricity.network-codes.eu/network\\_codes/](https://electricity.network-codes.eu/network_codes/)

պայմանագրերը սահմանում են, որ կողմերը նման պատասխանատվություն չեն կրում:

Հարկ է նաև նշել, որ պայմանագրերի օրինակելի ձևերի քանակը և կառուցվածքը կփոխվի շուկայական մեխանիզմների զարգացմանը համընթաց, սակայն շուկայի նոր կառուցվածքին անցման պահին մեծածախ շուկայի գործունեության ապահովման համար անհրաժեշտ պայմանագրերի օրինակելի ձևերը հետևյալն են լինելու.

- 1) Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի և Հաղորդման ցանցի օպերատորի հարաբերությունները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 2) Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի, Հաղորդման ցանցի օպերատորի՝ էլեկտրաէներգիա արտադրող կայաններին ծառայությունների մատուցման պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 3) Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի, Հաղորդման ցանցի օպերատորի՝ Երաշխավորված մատակարարին ծառայությունների մատուցման պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 4) Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի, Հաղորդման ցանցի օպերատորի՝ Անկախ մատակարարներին և Որակավորված սպառողներին ծառայությունների մատուցման պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 5) Համակարգի օպերատորի, Շուկայի օպերատորի, Հաղորդման ցանցի օպերատորի՝ Թրեյդերներին ծառայությունների մատուցման պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 6) ԿԷԱ կայանների և Երաշխավորված մատակարարի, Անկախ մատակարարների ու Որակավորված սպառողների՝ էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 7) ՉԷԱ կայանների և Երաշխավորված մատակարարի՝ էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 8) ՎԷԱ կայանների և Երաշխավորված մատակարարի՝ էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 9) ՄԷԱ կայանների և Երաշխավորված մատակարարի, Անկախ մատակարարների ու Որակավորված սպառողների՝ էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև,
- 10) Թրեյդերների և Երաշխավորված մատակարարի, Անկախ մատակարարների ու Որակավորված սպառողների՝ էլեկտրաէներգիայի առք ու վաճառքի պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև:

Նաև, Համակարգային օժանդակ ծառայությունների ծախսերի՝ հզորությունների վճարներից առանձնացման գործընթացին զուգահեռ անհրաժեշտ կլինի այդ ծառայությունների մատուցման պայմանները սահմանող պայմանագրերի առանձին օրինակելի ձևերի հաստատում:

## **5.2 Մանրածախ շուկայի կանոններ և պայմանագրեր**

### **5.2.1 ՄԱՆՐԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Հայաստանի մանրածախ էլեկտրաէներգետիկական շուկայում առևտրային հարաբերություններն այժմ կարգավորվում են Հանձնաժողովի կողմից 2006

թվականին հաստատված «Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով»<sup>10</sup>: Այս կանոնները կարգավորում են ՀԷՑ-ի հետ սպառողների ոչ միայն առևտրային, այլ նաև տեխնիկական բնույթ կրող հարաբերությունները: Առևտրային հարաբերությունների կարգավորման իմաստով այս կանոնները մշակվել են մանրածախ շուկայում միայն մեկ մատակարարի գործունեության իրականացման պայմանների համար: Ուստի շուկայի մանրածախ հատվածի աստիճանական ազատականացման համար անհրաժեշտ կլինի մշակել Մանրածախ շուկայի առևտրային նոր կանոններ, որոնք կապահովեն նաև Անկախ մատակարարների մուտքը մանրածախ շուկա: Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության այդ կանոնները պետք է ներառեն հետևյալը՝

- 1) Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի գործունեության սկզբունքները,
- 2) Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայում առևտրի իրականացման կանոնները,
- 3) Էլեկտրաէներգիայի մատակարարման եւ մատակարարման երաշխավորված ծառայություններին ներկայացվող պահանջները,
- 4) Էլեկտրական Էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձին ներկայացվող պահանջները,
- 5) սպառողների կողմից մատակարարներին փոփոխելու կարգը,
- 6) սպառած Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման ու վճարման կարգը,
- 7) առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման ու անճշտության հայտնաբերման դեպքում մատակարարի ու սպառողի փոխհարաբերությունները,
- 8) Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայում տվյալների պահպանմանը եւ թափանցիկությանը ներկայացվող պահանջները,
- 9) Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոններ եւ ընթացակարգեր:

## **5.2.2 ԲԱՇԽՄԱՆ ԳԱՆՑԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Հայաստանը ներկայումս չունի Բաշխման ցանցային կանոններ, սակայն որոշ տեխնիկական կարգավորումներ ներառված են Էլեկտրական Էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում: Այսպիսով, շուկայի նոր կառուցվածքի համար անհրաժեշտ կլինի մշակել Բաշխման ցանցի լիովին նոր կանոններ, հաշվի առնելով նաև դրանց նկատմամբ կիրառվող ENTSO-ե պահանջները: Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի նոր խմբագրության, նշված կանոնները պետք է ներառեն հետևյալը՝

- 1) բաշխման ցանցի զարգացման պլանավորումը,
- 2) բաշխման ցանցի օպերատիվ կառավարումը,
- 3) Էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորումը և կարգավարումը,
- 4) բաշխման ցանցին նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերի, ինչպես նաև նոր հզորությունների միացումը,
- 5) բաշխման ցանցում Էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման համակարգերին ներկայացվող պահանջները,

<sup>10</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114196>



- 6) բաշխման ցանցի արդյունավետ աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոններ եւ ընթացակարգեր:

### 5.2.3 ՄԱՆՐԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ

Մեծածախ շուկայում պայմանագրերի կառուցվածքն ըստ Էուրոյան կախված է, թե ինչպես պետք է կանոնակարգվեն սպառողների հարաբերությունները Բաշխման ցանցի օպերատորի և Անկախ մատակարարների հետ՝ Երաշխավորված մատակարարին փոփոխելու ցանկության դեպքում:

Երաշխավորված մատակարարի ծառայություններից օգտվելու դեպքում սպառողները մեկ միասնական պայմանագիր կկնքեն ինչպես Էլեկտրաէներգիայի մատակարարման այնպես էլ բաշխման ցանցի ծառայությունների մատուցման համար, քանի որ առաջին յոթ տարիների ընթացքում այս երկու գործառույթների միաժամանակյա իրականացումը կվերապահվի ՅԷՑ-ին:

Անկախ մատակարարի ընտրած սպառողների դեպքում կարող է լինել երկու տարբերակ: Մի դեպքում սպառողները կարող են Էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագիր կնքել միայն Անկախ մատակարարի հետ, իսկ վերջինս բաշխման ցանցով տվյալ սպառողի Էլեկտրաէներգիան տեղափոխելու համար՝ Բաշխման ցանցի օպերատորի հետ: Այս պարագայում սակայն Անկախ մատակարարի սնանկության դեպքում չվճարման ռիսկի ներքո կհայտնվի Բաշխման ցանցի օպերատորը՝ իր մատուցած ծառայությունների մասով: Մյուս դեպքում սպառողները կարող են առանձին պայմանագիր կնքել Անկախ մատակարարի հետ՝ Էլեկտրաէներգիայի մատակարարման համար, և առանձին պայմանագիր Բաշխման ցանցի օպերատորի հետ՝ բաշխման ծառայությունների մատուցման համար: Այս դեպքում Բաշխման ցանցի օպերատորը չի ենթարկվի լրացուցիչ չվճարումների ռիսկի:

Հայաստանի պարագայում, հաշվի առնելով, որ ՅԷՑ-ն այսօր ունի առևտրային հաշվառման, հաշիվների դուրս գրման, գումարների հավաքագրման արդեն իսկ կայացած համակարգ և սպառողների հետ աշխատանքի փորձ, ինչպես նաև շուկայի նոր կառուցվածքին անցնելուց հետո լրացուցիչ չվճարումների ռիսկերից զերծ մնալու նպատակով, նախընտրելի է վերը նշված տարբերակներից երկրորդը:

Ամեն դեպքում, անհրաժեշտ կլինի նաև Բաշխման ցանցի օպերատորի և Անկախ մատակարարների հարաբերությունների պայմանագրային կարգավորում՝ առևտրային հաշվառման տվյալների փոխանակման, չվճարումների դեպքում փոխգործակցության և սպառողներին վերաբերող այլ տվյալների արդյունավետ փոխանակումն ապահովելու նպատակով: Անհրաժեշտ կլինի կարգավորել նաև Բաշխման ցանցի օպերատորի և Որակավորված սպառողների հարաբերությունները՝ բաշխման ցանցով Էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայությունների մատուցման մասով:

Հաշվի առնելով վերը նշվածը մանրածախ շուկայի գործունեության համար անհրաժեշտ կլինեն պայմանագրերի հետևյալ օրինակելի ձևերը.

- 1) Երաշխավորված մատակարարի և վերջինիս սպառողների Էլեկտրաէներգիայի մատակարարման ու բաշխման ցանցով Էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայությունների մատուցման

պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև տարբերակված ըստ բնակչության և առևտրային սպառողների,

- 2) Բաշխման ցանցի օպերատորի և սպառողներին, այդ թվում Որակավորված սպառողներին, բաշխման ցանցով էլեկտրաէներգիայի տեղափոխման ծառայությունների մատուցման պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև տարբերակված ըստ բնակչության, առևտրային և Որակավորված սպառողների,
- 3) Բաշխման ցանցի օպերատորի և Անկախ մատակարարների համագործակցության պայմանները սահմանով պայմանագրի օրինակելի ձև,
- 4) Անկախ մատակարարի և վերջինիս սպառողների էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանները կարգավորող պայմանագրի օրինակելի ձև:

## 5.3 Լիցենզիաներ և լիցենզավորման կանոններ

### 5.3.1 ԹՐԵՑԴԵՐԱՅԻՆ ԼԻՑԵՆԶԻԱ

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ կլինի մշակել լիովին նոր լիցենզիայի պայմանների օրինակելի ձև թրեյդերներին տրամադրելու նպատակով: Վերջինս կգա փոխարինելու ներկայիս ներկրման և արտահանման լիցենզիաների պայմանների օրինակելի ձևերին: Լիցենզիայի պայմանների օրինակելի ձևը պետք է ամրագրի վերջիններիս՝ չկարգավորվող գներով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներից եւ ինքնավար էներգաարտադրողներից էլեկտրական էներգիա գնելու, էլեկտրական էներգիա ներկրելու, մեծածախ շուկայում այն վաճառելու եւ արտահանելու իրավունքը, ինչպես նաև գնված էլեկտրաէներգիայի դիմաց ժամանակին վճարելու պարտավորությունը, ներառյալ վճարման երաշխիքներին ներկայացվող պահանջները:

### 5.3.2 ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԼԻՑԵՆԶԻԱ

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությամբ ուժի մեջ մտնելուց հետո անհրաժեշտ կլինի մշակել նաև Երաշխավորված մատակարարին տրվելիք նոր լիցենզիայի պայմանները, և այն 7 տարի ժամկետով տրամադրել Բաշխման ցանցի օպերատորին: Երաշխավորված մատակարարը իր ծառայությունները կմատուցի Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում, այսինքն շուկայի նոր կառուցվածքին անցնելուց հետո Հայաստանում կլինի միայն մեկ նման կազմակերպություն: Տվյալ ժամկետի ավարտից հետո ՀՀ կառավարությունը իր կողմից հաստատված ծրագրի շրջանակում կորոշի, թե ինչպես ապահովել Երաշխավորված մատակարարի ինստիտուտի հետագա զարգացումը՝ մատակարարման և բաշխման գործառույթների ամբողջական տարանջատում ապահովելու նպատակով:

Երաշխավորված մատակարարը պարտավոր կլինի իր լիցենզիայի շրջանակում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայություն բոլոր այն սպառողներին, որոնք չեն օգտվում այլ մատակարարի ծառայությունից, կամ որոնք ընտրած մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարում չի իրականացվում՝ սպառողից անկախ պատճառներով: Երաշխավորված մատակարարն իրավունք կունենա էլեկտրական էներգիա (հզորություն) գնել մեծածախ շուկայում և ինքնավար էներգաարտադրողից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև այն ներկրել և ավելցուկը վաճառել մեծածախ շուկայի մասնակիցներին:

### **5.3.3 ԱՆԿԱԽ ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԼԻՑԵՆԶԻԱ**

Անհրաժեշտ կլինի մշակել նաև Անկախ մատակարարներին տրվելիք լիցենզիայի պայմանների օրինակելի ձև՝ մանրածախ շուկա մտնող նոր մուտք գործող մատակարարներին տրամադրելու համար: Լիցենզիայով պետք է ամրագրվի վերջինիններին՝ մեծածախ շուկայից և ինքնավար էներգաարտադրողից էլեկտրաէներգիա (հզորություն) գնելու կամ ներկրելու իրավունքը և այն իր հետ համապատասխան պայմանագրեր կնքած սպառողներին մատակարարելու իրավունքը: Անհրաժեշտ կլինի նաև ամրագրել շուկայում գնված էլեկտրաէներգիայի դիմաց ժամանակին վճարելու վերջինիս պարտավորությունը, ներառյալ վճարման երաշխիքներին ներկայացվող պահանջները:

### **5.3.4 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐՈՒՄ**

Այժմ գործող լիցենզիաները պետք է փոփոխությունների ենթարկվեն «էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը նոր խմբագրությունն ուժի մեջ մտնելուց հետո՝ վերջինիս պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Նախ, վերանայման կարիք կունենա Բաշխման լիցենզիան՝ էլեկտրաէներգիայի մատակարարմանն առնչվող վերջինիս դրույթները ուժը կորցրած ճանաչելու և համապատասխանորեն Երաշխավորված մատակարարի լիցենզիայի պայմաններում դրանք արտացոլելու նպատակով, ինչպես նաև բաշխման ցանցին մուտքի ոչ խտրական մուտքի իրավունքի ապահովման նպատակով: Բացի այդ, վերանայման կարիք կունենան էլեկտրաէներգիայի արտադրության ներկայիս լիցենզիաները՝ վերջիններին իրավունքների ու պարտականությունների համապատասխանությունը օրենքի նոր խմբագրության պահանջներին ապահովելու նպատակով:

### **5.3.5 ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

Ներկայիս գործող Լիցենզավորման կանոնները<sup>11</sup> պետք է վերանայվեն՝ ուժը կորցրած ճանաչելու արտահանման և ներկրման լիցենզիաների տրամադրմանն առնչվող ընթացակարգերը, ինչպես նաև սահմանելու նոր ընթացակարգեր Երաշխավորված մատակարարին, Անկախ մատակարարներին և Թրեյդերներին գործունեության լիցենզիաների տրամադրման պայմաններն ու գործընթացը սահմանելու նպատակով:

---


<sup>11</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113752>

Այս էջը բաց է թողնված տպագրության նպատակով

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ  
ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Այս էջը բաց է թողնված տպագրության նպատակով

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՇՈՒԿԱՅԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ







**Պատրաստված է  
«Հաշվարկային կենտրոն»  
Փակ Բաժնետիրական ընկերության կողմից**

**Երևան, 2018**